

Արև

ԱՄԱՍԱԳԻՐ
ԿՐՈՆԱԿԱՆ - ԳՐԱ ԱՐ - ԲԱԼԱԽԻՒԹ

ԳՐԱԶՈՒՄԱԳԻՐ ՀԵՇՎԱՐԱԿԱՆՈՒՅՆ ՀԱՅՈՎԱՐԴԻՐ ՀԱՅ ՊԱՏՐԻԳՈՒՅՆ



451 - ԾՈՐԵԼՐԵԱԿԱՆ ՏՐՈՒ - 1951
Ճ. ԳՐԵՎԱՐԱՐ ԱՐԵՎ ԳՐԱՎՈՐԱՅԻ ԶՈՐԱՎՈՐԱՅԻ ԱՐԵՎ
ՀԱՅՈՎԱՐԴԻՐ ԵՒ ՀԵՇՎԱՐԱԿԱՆՈՒՅՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԵՐԵՎԱՆ

ԽՄԲԱՀԴՐԱԿԱՆ

- Ամեն . Տ . Գարեգին Ս . Արքեպոս . Խաչատուրեան . 130
Նորբնիր Պատրիարք Կ . Պօլսոյ

ԿՐՈՆԱԿԱՆ

- Տերութական Ալոքքը (15) . ԳՅ . ՄՐԿ . Հ . ԳԱԼՈՒՍՏԵԱՆ 134
— Անահուքեան կարեւուքիւնը . X 137

ԲԱՆԱՀՍՑԱՃԱԿԱՆ

- Ապրիլ 24 Գ . ՄՈՒՇԵՆՑ 140
— ... Հոգիս սեղան մըն է բաց Մ . ՄԱՆՈՒԿԵԱՆ 141

ԲԱՆԱՀՍՑԻՐԱԿԱՆ

- Մինաս նկարով եւ իր ծաղկած նկարները . ՍԻՐԱՐՓԻ ՏԵՐ ՆԵՐՍԵՍԵԱՆ 142
— Խորենացի, Եղիշէ եւ Հ . Ներսէս Ակինեան . ՀՐԱՆԴ Ք . ԱՐՄԷՆ 147

ՊԱՏՄԱԿԱՆ

- Եղիշէ պատմագիր եւ Վարդանանց պատմազմը (3) . ՊԱՐՊԵՒ Վ. ԲՐԴ . ՎՐԱՆԿԵՍԵԱՆ 150

ՏԻՐՈՒՆԻ

- Գեր. Տ . Կարապետ Ս . Արքեպոս . Մազլրեան . 153
— Տ . Ներսէս Վ. Եղիշէ Պորոսեան . 154

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԵՆ

- Հեռացիր Ս . Էջմիածնէց . 155
— Հանդիսաւոր յիշատակուրիւն Կ . Պօլսոյ նորբնիր Պատրիարք
Ամենապատի Տ . Գարեգին Ս . Արքեպոս . Խաչատուրեանի . 155
— Ամսօնեայ լուրեր . 155
— Պատրիարք . 160

ՍԻՌՆԻ Տարեկան բաժնեզինն է՝ բոլոր Երկիրներու համար՝ Անգլ. Շիլին 15

Redaction of the Armenian Monthly SION

Armenian Patriarchate,

P. O. B. 4001

Old City - Jerusalem

Via Amman (Jordan)

"SION," an Armenian Monthly of Religion, Literature and Philology

Printed in
JERUSALEM

—ՍԻՆՈՆ—

ԽԵ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

1951 ≈ ՄԱՅԻՍ ≈ ԹԻՎ 5



ԱՐԵՎԱԿԱՆ

Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա. ԱՐՔԵՊՈ. ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆ

ՆՈՐԾԱՏԻՑ ՊԱՏՐԻԱՐՔ Կ. ՊՈԼՈՅՑ

ԽՄԲԵԳՐԱԿԱՆ

ԱՄԵՆ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ս. ԱՐՔԵՊՈՍ. ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆ

ՆՈՐԷՆՏԻՐ ՊԱՏՐԻՈՏ Կ. ՊՈԼՈՅՑ

Հակառակ օրերու արտմութեան, որքան արտաքին աշխարհի նոյնքան մեր ներքին կեանքին վրայ, մխիթարական պարագայ մը եղաւ ընտրութիւնը Տ. Գարեգին Ա. Արքեպոս. Խաչատուրեանի, յաթոռ կ. Պոլսոյ պատրիարքութեան: Ուրախութիւնն է մեզի իրազեկ ըլլալ որ տարիներու հակամարտութիւններով բաժնուած կողմերը մեր ժողովուրդին, վերջապէս կրցին հասկնալ զիրար գերազոյն յղացքին մէջ, որ կ. Պոլսոյ Հայոց պատրիարքութիւնն է, տակաւին երէկ այնքան շքեղ և նախախնամական դերով կապուած մեր ժողովուրդի կեանքին, իսկ այսօր այլապէս սրտառուչ հանգամանքով շարունակելու և իրազործելու ինքզինքը և իրմով պայմանաւոր անցեալ, ներկայ և զուցէ ապագայ այն կարելիութիւնները՝ որոնք տակաւին կը մնան կապուած այդ Աթոռին, և անով պայմանաւոր հայ ժողովուրդի իրաւունքներուն:

Այս ընտրութիւնը ընդհանուր և ջերմ ուշագրութեան առարկայ կ'ընէ նորէն կ. Պոլսոյ Պատրիարքական Աթոռը, նախ որ այս կը կատարուի յանձին արդի հայ եկեղեցականութեան ամենէն զգնամիտ և փառաւոր մէկ ներկայացուցիչին, երկրորդ այս բարեդէպ առիթով կը վերահաստատուի Թուրքիոյ պատրիարքութեան ընտրութեան մեր իրաւունքը: Ահա թէ ինչու կը բերկը մեր հոգին ի լուր յարմարագոյն այս ընտրութեան, զգայուն, հոգեսէր և զիտուն հոգեսրականին, որ ամենէն բախտորոշ մէկ շրջանին, կուզայ զրաւելու տարիներէ ի վեր թափուր մնացած և մենատիրական ու շահամէտ շահազործումներու առարկայ եղած նուիրապետական այս Աթոռը:

Ան կուզայ, տարիքով և իմաստութեամբ պսակուած, զիտակից իր գերին և բազմապահանչ պաշտօնին, գործելու համար դաշտի մը մէջ, ուր իրականութիւնը իր պարագային թէկ սրտապնդիչ գոյներով կը ներկայանայ, սակայն ուր շատ բան կայ ընելիք, շատ բան քանդուած ըլլալուն համար:

Ի՞նչ պիտի ընէ, կամ աւելի ճիշդ ի՞նչ պարտի ընել Թուրքիոյ նորընտիր Պատրիարքը. բայց այս չէ որ պէտք է ամենէն աւելի մտազրաւէ զմեզ: Նորընտիր Պատրիարքը ինք անտարակոյս այդ հարցումը ըրած է անշուշտ իր խիզճին, և վստահ միայն պարտինք ըլլալ թէ, իրեւ զիտուն՝ զիտակից և պարտաճանաչ հոգեւորական, զիտէ թէ ի՞նչ և ի՞նչպէս պարտի ընել՝ կատարելու համար իրմէն սպասուածը:

Իսկ թէ ի՞նչ պարտի ընել Թուրքիոյ հայութիւնը, զօրավիդ ըլլալու համար իր Պետին, իրապէս արդիւնաւորելու համար անոր զործը հանրային բարւոյն

և օգտին համար : Եթէ խորհինք թէ և յաղթանակ արժող զործերու կը սպասուի արդինաւորելու այս պաշտօնը, պէտք է նկատի ունենանք թէ յաղթանակը որ միշտ պտուղն է հրաշքին, կախեալ է հաւատքէն՝ այսինքն հոգեկան կեցուածքէն՝ ոչ միայն անոր որ պիտի զործէ հրաշքը, այլ նաև անոնց՝ որոնց համար է մանաւանդ որ պիտի զործուի հրաշքը :

Արդ, մեր կարծիքով Կ. Պոլսոյ մերազն ժողովուրդը և բովանդակ Հայութիւնը աջակցած կը լինի Թուրքիոյ նորընտիր Պատրիարքին՝ իր պաշտօնի կատարմանը մէջ, եթէ ամէն բանէ աւելի նախ խոր ակնածանքով դիմաւորէ եկողը . ապա այն գաղափարն ու գերը զոր ան կ'անձնաւորէ : Յարդանք ըսելով չենք հասկնար միայն արտաքին այն պատշաճութիւնները զորս ամէն պատուազած հայ ունի իր Եկեղեցւոյ պետին նկատմամբ, այլ այն ակնածանից վստահութիւնը թէ ընտրողներն ու ընտրուողը խորապէս ըմբռնած են կացութիւնը՝ որով մտահոգուած է ամէն Հայ Եկեղեցւոյ գաւակ, ինչպէս արտասահմանի, նոյնպէս Մայր Հայրենիքի մէջ :

Յարդել՝ այսինքն արժէք տալ այն բոլոր տեսակէտներուն, ցանկութիւններուն և սկզբունքներուն, զորս նորընտիր Պետը ունի իր պաշտօնին եւ զործին նկատմամբ : Զինքը ընդունելէն վերջ սրտազնն, լսել զինքը հաւատքով և աջակցիլ իրեն յարդանքի և հնազանդութեան ողիով, ազգային և կրօնական կեանքի զգացումին ընդմէջէն, մոռնալով խէմերն ու վէճերը, որոնք կը տառապեցնեն տարաբախտօրէն քանի մը տարիէ ի վեր Կ. Պոլսոյ հայութեան ողին :

Նորընտիր Պատրիարք Տ. Գարեգին Արքեպոս . Խաչատուրեանի անձը, ոզին և տարիներու արդինաշատ զործունէութիւնը, ապացուցուած զրաւականներն են բովանդակ ազգի ակնկալութեան : Իր ուխտի պատղամը, արտասահուած 15 Մարտ Հինգշաբթի օրը աթոռանիստ Մայր Եկեղեցւոյ մէջ, ուրիշ զրաւական մը մեր ակնկալութեան ու հաստատումին : Խաղաղութեան և սիրոյ իր խօսքը, պատղամն է բովանդակ քրիստոնէութեան և մանաւանդ Հայ Եկեղեցւոյ ողւոյն և զգացումին, և արդի ժամանակներու հրամայական պահանջներուն :

Աթոռը զոր կը զբաւէ նորընտիրը, պանծալի հսութենէ աւելի մեծ հմայք ու գեր ունեցած է մեր Եկեղեցական ու ազգային հինգհարիւրամեակի ընթացքին : Սակայն անցեալը եթէ կը խօսի մեզի, ներկան ու իր անհրաժեշտութիւններն են որոնք գերազանցօրէն կը շահազրդուն այսօր զմեզ : Թուրքիոյ մեր ազգային կեանքի աղէտն ու տրամութիւնները շատ բան պակսեցուցած են անտարակոյս Աթոռին իրաւական հմայքէն, սակայն անիկա կը մնայ իր նուիրապետական դիրքին մէջ : Թուրքիոյ Հայոց Պատրիարքութիւնը իր զիրքին ու անցեալ փառքին համապատասխան հաստատութիւն մը և Աթոռ մը կարենալ ըլլալու և շրունակելու համար, այս ընտրութիւնը պէտք է սկիզբ մը նկատուի նոր իրագործումներու և նուածումներու, եթէ մեծ չի հնչեր բառը :

Անոնցմէ ամենէն էականը մենք կը նկատենք գէպքերու բերումով հոգիներուն մէջ աղօտացած բայց դարաւոր իր ոյժէն երբեք չինկած յղացքներու վերաբեւրումը, լսել կ'ուզենք մեր ժողովուրդի ամուր վստահութիւնը իր Եկեղեցւոյ դերին վրայ : Տակաւին շատ հեռացած չեն մեզմէ այն օրերը երբ

հովուապետի մը տիրական անձը կը դզբէը մեր բոլորին հոգիները, անոնցմէ առնելու համար անմահ իսկութիւնը արգաւանդ կեանքին: Մեր ժողովուրդը դեռ չէ դադրած բաց պահելու իր սիրտը սրբազն ձայներու, երբ զայն հնչեցնելու կարելիութիւնը ստեղծուի անշուշտ: Թուրքիոյ Հայոց նորընտիր Պատրիարքին և այդ աթոռով պայմանաւոր ժողովուրդին համար առաջին աստիճանի անհրաժեշտութիւն է բաց հոգիով և սրտով դիմել այդ ոյժերու անթառամ շտեմարանին՝ անկէ վերբերելու համար այն՝ որ բաւեց դարուց ի դարս այս ժողովուրդի հաւաքականութիւնը, ողեղէն խտութիւնը անվթար պահելու:

Սյստեսակէտով սրտապնդիչ ու բարձրօրէն զովելի մտածումը նորընտիր Պատրիարքին, մտադրած ըլլալը Ընծայարանի մը բացումը կ. Պոլսոյ Պատրիարքութեան հովանաւորութեան ներքեւ, շարունակելու համար Արմաշու, այլևս խափանուած, Դարեկանքին դերը, Թուրքիոյ հայութեան կրօնական պէտքին սատար հանդիսանալու համար: Գուցէ ոչ ոք պիտի կրնար իրաւամբ մտածել և այս անտեղիտալի պահանջքը իրազործել, բայց միայն նորին Ամենապատուութիւն՝ նորընտիր Պատրիարքը:

Ոննը որ մօտէն կը ճանչնան իր անձն ու արժանիքները, իր իղձերուն անկեղծութեանցը մէջ, և Թուրքիոյ Հայոց կրօնական կարիքն ու ժողովուրդին պէտքերը իրենց խորութեանը մէջ, կրնան վստահ ըլլալ թէ նոր թուականի մը առաւօտն է որ կը ծագի տարիներէ ի վեր ամայացած կ. Պոլսոյ Աթոռին վրայ: Սյստեմատար համոզումը ոչինչ ունի պատրողական, վասնդի կը հաւատանք թէ արդիւնք է ոչ թէ սիրելի զղացումի մը միայն, այլ սկզբունքի մը:

Սյդ սկզբունքը այն մտածումն է ինքնին՝ թէ համայնքներու կեանքին շինութեան գործը ամենէն առաջ և աւելի կը կարօտի բարոյական ուժերու, որոնք երեան կուզան բարոյական առաքինութիւններով զօրացած գործիչներու միջոցաւ: Գաղափար մըն է այս, որուն ճշգութիւնը հաստատող սրտազրաւօրէն դեղեցիկ ապացոյցներ քիչ չեն եղած մեր ազգային կեանքին մէջ: Հայութեան լաւագոյն օրերը կը զուզադիպին միշտ իր բարոյական մեծութեան թուականներուն: Սյդ թուականներէն իւրաքանչիւրին վերև կը սաւառնի միշտ դէմքն ու անունը Հաւատքի և Տեսիլքի մարդոց, որոնց մէջ միայն կրնայ ապրիլ «Աստուծոյ Հոգին», առաջնորդութեան ճշմարիտ ուժը:

Թուրքիոյ Հայութեան նորընտիր Պատրիարքը, Ամեն. Տ. Գարեգին Ա. Արքեպս. Խաչատուրեան, բարձրօրէն օժտուած իմացականութեամբ և սրտով, քաջալերուած կ. Պոլսոյ, բովանդակ Թուրքիոյ, ինչպէս նաև ազգին ընդհանրական վստահութեամբ, պիտի կրնայ բռնկեցնել կայծը հայ մտքին ու հոգիին, ինչպէս ըրին տակաւին երէկ մեր նուիրապետական ծանօթ Աթոռներուն վրայ իր ուսուցիչներն ու հոգեկցորդ եղբայրները:

Սիրելի ու բարձրօրէն կենսական է իր մտածումը. կը հաւատանք թէ այդ մտածումը իրեն ըլլալով հանդերձ, մտածումն ու պահանջն է նաև կ. Պոլսոյ հայութեան, որուն մէջ երբեք չէ լուծ հոգեկան և իմացական արժէքներու ձայնը, ու մանաւանդ կը հաւատանք նորընտիր Պահակալին այդ արժէքներու շուրջ մօտ կիսագարեան իր խանդավառ սպասին:

Յաջողութիւնը Աստուծմէ է անշուշտ, բայց մեզմէ կուզայ կամքը զայն իրացնելու:

Ամենապատիւ Տ. Գարեգին Պատրիարքի եկեղեցական ու հանրային կեանքին հետևողներուն համար, դժուար չէ եղած իր մէջ հաստատել արժէքներ և առաքինութիւններ, որոնք միայն երջանիկ կընան ընել այն հաստատութիւնը՝ որուն իրեն պետ կը կոչուի լինքը։

Եղած է աշակերտ ազնիւ, զիտուն և բարձր հոգիի մը, Դուքեան Արքաղանին, հետևող մը անոր կեանքին ու իւրացնող մը անոր մտաւոր ձիրքերուն։

Եղած է վարդապետ և ուսուցիչ, այսինքն դաստու հաւատոյ և ուսման, այս վերադիրներու լայն հասկացողութեանց ընդմէջէն։ Եղած է նոյնպէս վարիչ և Տեսուչը եկեղեցւոյ (Եպիսկոպոս) և եկեղեցական հաստատութեանց։ Եղած է գրող, ուսումնասիրող, բարգմանիչ, զիրին ու զիրքին արժէքը մեծապէս զնահատող և անով ժողովուրդին հասնելու շանացող։

Վերջապէս՝ եղած է անձ մը նուիրեալ և հաւատարիմ իր կոչման և ուխտին բարձրութեան։ Փառաւորուած է իր կրօնական սքեմով և փառաւորած զայն։

Արդիւնաւոր ըլլալու աստիճան վաւերական զրագէտ մըն է ինքը, և ինչ որ ելած է իր զրչէն, Շողակարումներէն սկսեալ մինչեւ Ա.Ժաւրիի Լոյսն ի Հայու՝ երկու պատկառելի հատորներ, Տարօնաւունչ, և Նարեկ՝ տաղաչափուած աշխարհաբարով ու տակաւին հրատարակութեան պատրաստ երկեր, անիկա կը զրէ գերազանցօրէն օգտակար ըլլալու աւագ ցանկութեամբ մը։ Արդարեւ, քառասուն տարի է որ Ամենապատիւ Տ. Գարեգին Պատրիարքի մաքին բոլոր ուժերը, հոգիին բոլոր խողովքները զործի վերածուեցան այդ մայր ցանկութեան խողովակով։ Դասախոս, թարգմանիչ, պատմիչ, հաւաքիչ, զործիչ, եկեղեցւոյ պաշտօնատար, այս բոլոր պայմաններու ներքեւ անիկա կը հպատակի նոյն այդ նշանաբանին։

Իր զրականութեան ամենէն յանկուցիչ և ինքզինքը պարտադրող ողին իր կրօնազգած ըունչն է, որով տողորուած են իր բոլոր էջերը։ Այս ողիովն ու շունչովը կը մնան գրոշմուած իր բոլոր երկասիրութիւնները։ Եւ ասիկա անոր համար, վասնզի իր բովանդակ կեանքը զոր յատկացուց իր ժողովուրդի հոգեոր և մտաւոր յանձանձումին, այդ ողին և զիծն է որ կը վերբերէ։

Անշուշտ այս քանի մը ընդհանուր նշմարները իր կեանքէն ու զործէն, չեն ներկայացներ տիպարը, իր բոլոր չնորհներուն մէջ, սակայն կը բերեն փաստերը շքեղ ու աղուոր կեանքի մը և զործի մը, որ այսօր այնքան իրաւունքով և արժանիքով կը բազմի ի. Պոլսոյ պատրիարքական դահուն վրայ, իրազործելու բովանդակ ազգին ակնկալութիւնը իրմէն։

ԿՐՈՆԱԿԱՆ

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈՔՔԸ



Ուրեմն, մենք ալ ջանալու ենք տիրանալու երկնաւոր բնութեան մը որով ի սպառ ազատած կ'ըլլանք մեր թերացումներէն և անփութութիւններէն։ Բայց՝ ցաւալի է որ նոյն խոկ մեր այս ջանքերուն մէջ կ'ընենք այսպիսի յանցանքներ որոնցմէ պրօծելու, ազատելու համար ճիգեր կը թափենք։ Հետեւաբար, ի՞նչ կը մեայ մեզ՝ եթէ ոչ Աստուծոյ ներողութեան ապաստանիլ մեր այսպիսի պարտքերուն և յանցանքներուն համար ևս։ Այս՝ թերի են մեր ծառայութիւնները Աստուծոյ մատուցուած։ թերի հնազանդութիւն մը չի ներդաշնակուիր բոլոր պահանջներուն հետ այն Օրէնքին որ կատարեալ է իր Օրէնստուին պէս։ Աստուած մեզմէ կը պահանջէ կատարեալ հնազանդութիւն, կատարեալ սէր, կատարեալ պաշտում, կատարեալ վստահութիւն, կատարեալ սրբութիւն, կատարեալ սրբարանութիւնը իր Անուան, կատարեալ բաղձանքը՝ իր Թագաւորութեան գալուն, կատարեալ լրազործումը իր Կամքին, վերջապէս, մէկ խօսքով, մեր բոլոր սիրտը։ Մեր ընկերներն ալ մեզմէ կը պահանջեն սէր, գութ, օգնութիւն, բարի օրինակ, շինիչ և օգտակար խօսք, անուշ լեզու, ժամանակ, գէմք, ցաւակցութիւն, արտասուելու յօժար աչքեր, ցաւի ու պաղատանքի հառաջանքներ լսելու պատրաստ ականջներ, վերջապէս տաք և համակիր սիրտ մը։ Հարցնենք. մեր վարքը, մեր կենցաղավարութիւնը մարդոց առջն անթերի և ամբասիր եղած են։ Նոյնպէս մեր հոգին Աստուծոյ առջեւ անթերի եւ անմեղ եղած է։ Թող ամէն մարդ ինքն իրեն համար գտնէ պատասխանը այս ամենակարեւոր երկու հարցումներուն, եւ անոր համեմատ վճռէ, թէ պէտք ունի՞ Աստուծոյ հայրական ներողութեան իր թերացումի և անփութութեան յանցանքներուն և պարտքերուն համար։ Արդեօք անհախատաշար և անաչառ միտք մը, սուրբ և ուղիղ սիրտ մը, անեսամոլ հոգի մը

կրնա՞յ ժխտել մեր այս անվիճելի պէտքը։ Արդեօք կրնա՞նք մեր նոր արդարացնել, մեր թերացումները օրինականացնել, մեր պատասխանատուութիւնները առ ոչինչ հանել և մեր խորհճը լուցունել։ Ո՞չ։

(4) — Մեր անձնական ապատամբութեան մեղքերը պէտք ունին ներողութեան Այո՛, ներողութեան միայն պէտք ունին մեր այն ամէն պարտքէրը, զորս Աստուծոյ գէմ մեղքէ տարբեր բան մը չենք կրնար անուանել՝ լրջօրէն մտածելով։ Բանականութիւնը, խղճմտանքը, կը թութութիւնը, և ա՛լ աւելի Աստուծոյ յայտնուած Բանին լոյսը պարզօրէն կը յայտնեն, թէ անոնք մեղքեր են՝ բազմաբարիք Հօր մը գէմ գործուած։ Այս ամենէն աւելի Անոր՝ իր Որդւոյն՝ Յիսուս Քրիստոսի միջոցաւ ըրած սիրոյ ամենաքաղցրը յայտնութիւնը ո՞րչափ աւելի երեան կը հանէ մեր մեղքերուն սե ազտերը. աղտեր՝ որոնք կը նսեմացնեն մեր հոգիներուն սպիտակութիւնն ու փայլը Երբ մեր յիշողութեանց սլացքը, հեռուն, շատ հեռուն, մեր արդաշական և պատանեկան կեանքի օրերուն գարձնենք, անցեալին փոշոտ ալքերուն մէջ ո՞րչափ մեղքեր պիտի տեսնենք. թերացումի, անփութութեան, անհնազանդութեան. օրինազանցութեան և պարտազանցութեան ի՞նչ մեղքեր։ Երբ դառնանք զարգացման և ինքնազիտակցութեան այն շրջանին, երբ մեր ազտա կամքով ընտրեցինք քաղցր լուծը Աւետարանին, երբ Քրիստոնեայ անունը պարծանքը ըրինք մեր հոգիներուն, երբ ինքզինքնիս ալ մէկ գործօն անդամը հաւատացինք այն մեծ մարմինին որ Քրիստոնէական Եկեղեցի կը կոչուի, այն ատենէն մինչեւ հիմա՝ ի՞նչ մեղքեր չենք գործած Աստուծոյ գէմ։ Այո՛, մեղքեր, որոնց պատճառած խղճախայթի անխնայ ծակծ կումներուն տակ տառապած ենք շատ օրեր։ Պետրոսին թերահաւատութեամբ ո՞րչափ անգամներ սարսափահար չեղանք մեղաց ծովուն լոյժ ալքերը խորասուցուելու երկիւղով։ Եւ նոյնիսկ վախսկոտ և վատողի ուրացութեան գիշերներէ ետքը ո՞րչափ անգամներ չի տեսնանք Փրկչին զթու նայուած քը՝ որ իր ցաւերուն ու տագնապներուն մէջէն ներհայեաց ակնարկի մը կը հրաւիրէր զմեզ։ Թովվմասին անհաւատութիւնը, Զեբեղիկան

որդիներուն մեծատենչիկ սիրտը իրենց գոյութիւնը չի յայտնեցի՞ն մեր մէջ շատ անդամներ։ Ա՞յս, այն պայքարը, ներքին պայքարը Հին Մարդուն և Նոր Մարդուն միջև։ Երկու օրէնքները, բարիի օրէնքը և չարի օրէնքը, ո՞րչափ շատ տառապեցուցած են մեզ։ Թէև փափաքած ենք բարին ընտրել, կեանքին փարիլ, Նոր Մարդուն անսալ, բայց չէ՞ որ յաճախ չարը ընտրած ենք, մահուան հետեւած և Հին Մարդուն մտիկ ըրած։ Ս. Պօղոսի այն պայքարը խոռված է յաճախ խաղաղութիւնը մեր հոգիներուն։ Խաղաղութիւնը որ Յիսուսի խոստացած և տուած խաղաղութիւնն է. և ատոր համար իսկ մեր արցունքը մեզի հաց եղած է։ Ո՞վ կրնայ նկարագրել խոռված հոգիի մը վրդովանքը, երբ կը փրփրի, կը կատղի ներքին ծովը և անոր ալիքները աղի կաթիլներ կը ցայտեցնին մեր աչքերէն գուրս։ Դաւիթի ԾԱ. սաղմոսը «Աղօրմեան» կրնայ յստակ գաղափար մը տալ մեզ այս մասին։

Ուրեմն, Աստուծոյ դէմ մեր յայտանդիման մեղքերն ալ պէտք ունին ներողութեան։

Գ. — Ահաւասիկ տեսանք ներողութեան բնութիւնը եւ մեր պէտքը՝ անոր համար։ Հիմա տեսնենք թէ ինչ պայմանով խոստացուած է ան մեզի։ Արդէն հայցուածին երկրորդ մասը կը պարզէ այդ պայմանը։

(1) — «Եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց»։ Ահա այս Ուրական է կշիռը, չափը, պայմանը այն ներողութեան զոր մենք պիտի ակնկալենք Աստուծմէ։ Անպայման գութ կամ չնորհք չխոստացուիր Ս. Դիրքին մէջ։ Որովհետեւ, մարդ իրեւ բարոյական էակ մը, իրեւ բարոյական գործիչ մը առնուած է Աստուծոյ կողմէ։ Աստուծ իր օրէնքով կը յարգէ մեր կամքի ազատութիւնը, բարոյական պատասխանատութիւնները։ Մեր հաւատքին հետ մեր գործերն ալ պէտք է պաղաւորին մեր մէջ։ «Հաւատք առնոց գործոց մեռեալ ենց։ Որովհետեւ, հաւատքի ծառը, որուն արմատը մեր հոգիներուն խորն է, գործերով կը ծաղկի ու կը բեղմաւորուի, բարեգործութեան հիւթեղ պտուղներով կը բեռնաւորուի։ Աշխարհ միայն հաւատաց-

եալներուն աշխարհը ըլլալու չէ, այլ հաւատացեալ գործողներու աշխարհ։ Հետեւարար, զուր տեղ չէ որ մեր վայելելիք ներողութեան փոխարէն ալ մեզի գործել — այսինքն ներել սահմանուած է, և այս շատ բնականարար։ Այս ճշմարտութիւնը նոյնն է Աստուծոյ բոլոր խոստումներուն համար։ ուր որ կայ խոստում մը կենաց Բանին մէջ, կայ նաև պայման մը, «Եթէ ոմը Աստուած կը զայրանայ իսրայէլին դէմ իր ընտրեալ ծառաներուն բերնով կը սպառնայ անոնց գերութիւն և կորուստ սահմանել։ բայց, քիչ մը վերջ, «Եայց»ով մը կը քաջալերէ զանոնք։ Բարիք մը կը խոստանայ բայց «Եթէ»ով մը բան մը կը պահանջէ անոնցմէ։ Այսպէս ալ Աստուած պիտի ներէ մեզ եթէ մենք ալ ներենի մեր պարտապաններուն։ Եւ արգէն մենք ենք այս պայմանը գնող մեր այս հայցուածին մէջ։ «Որպէս և մեք թողումք»։ Ահա գարձեալ կը հանդիպինք «Որ չափով որ չափէք, անով պիտի չափուի ձեզ» ճըշմարտութեան, ինչ որ արգար է թէ՛ խոնդի, թէ՛ մարդկային և թէ՛ ալ Աստուածային օրէնքով։ Ուրեմն, գործնականապէս ներբենք ալ՝ երբ կ'աղօթենք, «ինչպէս որ կը ներենք»։ Աններողներու համար անէծք կ'ըլլայ այս աղօթքը։

(2) — Արգէն Քրիստոսի քաւութիւնը պայման մըն է զթութեան և չնորհաց։ Մեր «պարտքերը», ինչպէս ըսինք, կը նշանակեն մեր յանցանքները (Մատթ. Զ. 14), կը նշանակեն մեր «մեղքերը» (Ղուկ. ԺԱ. 4), և մեղքը պարտք մըն է որ պէտք է հատուցուի պատիժով։ Հետեւարար, եթէ մենք չափաստանինք Քրիստոսի չարչարանքներուն, եթէ չլուացուինք կողահոս աղրիւրէն, ստիպուած ենք չարչարուիլ բանտին մէջ, գոհացնելու համար օրէնքին տրամադրութիւնները Բայց, փառքք Փրկչին քաւութեան։ «Որովհետեւ Յիսուս մեզ, մեղաւորներուն համար, մեղաւոր համարուեցաւ»։ Յիսուս կրեց խաչին այն չարչարանքները՝ որ մենք երջանկութիւն վայելենք։ Գեթսեմանիի տագնապներու զիշերուան մէջ ծնրագրեց՝ որ մենք փրկութեան լոյս-ցերեկին մէջ կանգնինք մեր գլորումէն։ փուշէ պսակ դրուեցաւ՝ որ

մենք անթառամ պսակին արժանանանք . Նախատինքի կարմիր քղամիդը հագաւ՝ որ մենք որդիութեան հին պատմուճանը զգենունք . Անոր ձեռքերը ծակեցին՝ որ մենք փրկութեան ճամբէն քալենք . Անոր կողը ճեղքեցին՝ որ մեր սիրտերը բաց ըլլան կենաց Բանին արդասաբեր սերմերուն . զայն կոփեցին և ձաղկեցին՝ որ մենք հանգստանանք . զԱյն ծաղրեցին՝ որ մենք գովուինք . Անոր վրայ թքին՝ որ մենք մաքրուինք . Անոր ծաղրանքի ծունք կրկնեցին՝ որ մենք սուրբերուն համար պատրաստուած գահերը ժառանգենք . Ան Գողգոթան մազլցեցաւ՝ որ մենք Արքահամու գոզը բազմինք . Ան խաչուեցաւ՝ որ մենք անպարտ արձակուինք . Ան պատնուեցաւ՝ որ մեր գերութեան կապանքները կոտրտէ . Ան թաղուեցաւ՝ որ մենք յարութիւն առնենք . Ան յարութիւն առաւ՝ որ մեզ իր յաղթութեան մասնակից ընէ . վերջապէս, երկինք համբարձաւ՝ որ մեզ ալ երկնաւոր երանութեանց մէջ իրեն փառակից ընէ, և Աստուծոյ որդիներ ըլլալու փառքին արժանացնէ : Հետեաբար, այսչափ փրկանք ու փոխանակութիւն քիչ էր քաւութեան համար . այսչափ պատիժ չէ՞ր բաւեր քաւութեան ծածկոցով գոցելու համար մեր մեղքերուն զագրութիւնները : Ուրեմն, յայտնի կը տեսնուի թէ Աստուծոյ ներողութիւնը կը շնորհուի մեզ Քրիստոսի քաւութեան անդնահատելի և վսեմ պայմանով :

(3) — Ապաշխարութիւնն ալ մեր կողմէն կատարելի ուրիշ պայման մըն է ներումի արժանանալու համար : Յայց սա ո՛չ թէ արժանիքի, այլ պէտքի պայման մըն է, առանց որու չենք կրնար քաւութիւնը ընդունիլ . որովհետեւ, քաւութեան սրտագին ընդունելութիւնն է ապաշխարութեան կատարումը : Ապաշխարութիւնն է միակ ճամբան, որով անառակ որդի մարդկութիւնը ետ կը դառնայ իր հօրը տունը : Երբ կարող ըլլանք ճշմարիտ անկեղծութեամբ ըսել «Հա՛յր մեր», այս է ճշմարիտ պատշխարութիւնը : Այս զոյգ մը բառերը զղջման, ստրջանքի արցունքներ պիտի աղբերացնեն մեր սիրտերէն, երբ մենք խորհինք մեր Հօրը տան լիութեան, առատութեան վրայ և դարձի որոշումով ըսենք .

«Յարուցեալ գնացից առ Հայր իմ» : Այն ատեն չարժած իսկ է մեր Հօրը զութը . այն ատեն ներած է Ան մեզ արդէն : Եւ երբ հեռուէն կը տեսնէ մեզ, կը վաղէ թեատարած, կը գրկէ, կը համբուրէ կաթողին, կը սեղմէ իր բարախուն սիրտին վրայ, իր զութի արցունքները կը խառնէ մեր զիղջի արցունքներուն հետ, և կ'ընդունի զմեզ հին սիրով, իրբե իր որդին : Այս՝ ապաշխարութեան, զղջումի գործած հրաշքն է, հրաշքներու հրաշքը :

Ներողութիւնը առուծախի առարկայ մը չէ, ինչպէս կը կարծեն կարգ մը քրիստոնեաներ, և կարծեցին անցեալին մէջ ալ : Նախ՝ ան չնորհք մըն է, Յիսուսի քաւութիւնով պարգևուած, և երկրորդ՝ մեր ապաշխարութեամբ երաշխաւորուած : Այո՛, կը գնուի ան, բայց ոչ թէ դրամով ու բարեգործութիւններով, այլ պոռնիկին սիրտէն աղբերացող արցունքով, Պետրոսին գառն լացով, Դաւիթին «Աղօրմեա»ով, ապաշխարողին բեկեալ սիրտով, մաքսաւորին «Աստոււած, քաւեա զիս զմեղաւորս» խոնարհ հայցուածով, աւազակին «Յիշեա զիս»ով, և մեղաւորին աղեկիզիչ հառաչանքներով . առանց ասոնց, աշխարհի բուլոր գանձերը չեն կրնար կաթիլ մը գութ, չիթ մը չնորհք, պուտ մը ներողութիւն զնել : Եւ ան կը վաճառուի միայն անոնց՝ որ կ'ապաշխարեն և Աստուծոյ սրբութեան քանցքներուն կը փարին : Ուրեմն, մեր հոգեխօսիկ հոգեսոր հայրերուն հետ, զուշնք սրտագին . «Ծնդ անառակին որդւոյ գոչեմք առ հայրդ գթած, մեղաք յերկինս և առաջի քո, քաւիչ յանցանաց» : Եւ վստահ ըլլանք որ Ան պիտի ներէ մեզ :

(4) — Վերջապէս, կրնանք ըսել որ անգութին համար գութ, և աններողին համար ներողութիւն չկայ : Որովհետեւ, ինչպէս որ կը ներենք՝ այնպէս պիտի ներուի մեզ : «Երանի՛ ողորմածաց, զի նոքազողորմածաթիւն գտցեն» (Մատթ . Ե. 7) : Երբ մտածենք որ մեր ներելը Աստուծոյ ներութիւնը պիտի արժէ, ի՞նչ մեծ արժանիք մեր հոգիներուն . . . : Մենք որ ներելն անգամ չենք գիտեր . . . : Որովհետեւ՝ հոսկը տեսնենք «Որպէս յերկինս և յերկրի» բանաձերին փոխուած մէկ առումը . այսինքն, «ինչպէս որ երկրի՝ անանկ ալ երկինքի մէջ», և այս ներողութեան համար,

որով երկինք և երկիր կրնան իրարու զօդուիլ: «Զի եթէ թողուցուք մարդկան ըգյանցանս նոցա, թողցէ և ձեզ Հայրն ձեր երկնաւոր: Աստ եթէ ոչ թողուցուք մարդկան զյանցանս նոցա, և ոչ Հայրն ձեր երկնաւոր թողցէ ձեզ զյանցանս ձեր» (Մտթ. Զ. 14-15): Երբ Պետրոս հարցուց թէ միայն եօթն անդամ ներելու էր իր եղքօր, Յիսուս ըստ թէ եօթանասուն անդամ եօթը. Նաև խօսեցաւ չար ծառային առակը, որով կը պարզէր թէ տասն հազար տաղանդի ներում ստացող մը ինչպէս չի ներեց հարիւր դահեկան պարտականի մը, և թէ ինչպէս պատժուեցաւ այդ պատճառաւ: Այս՝ ամէնքս ալ տասը հազար տաղանդի պարտք ունինք որ օրէ օր կը բազմապատկրի և բան մը չունինք զայն հատուցանելու համար: Ուրեմն, ամօթ չէ մեզ մեր ընկերոջ քիչ մը պարտքը չի ներել՝ երբ շատ ներուած է մեզ: Մենք չենք կրնար Աստուծոյ ներողութեան հաւատալ, եթէ անոր գոնէ ստուերը չունենանք մեր սիրտերուն մէջ, որ է ներել մեր ընկերոջ. եթէ չենք ներեր՝ ներումի զգացում չենք կրնար ունենալ: Անոր շատ մեղքերը ներուեցան, որովհետեւ նա շատ սիրեց: Սիրող սիրտը ներող սիրտ է: Ահա այս կերպով սիրոյ օրէնքը ներողութեան օրէնքին կը լծորդուի. «Այս՝ որ իր եղքայրը չի սիրեր՝ մահուան մէջ կը բնակի»: Յիսուս ալ զինք չարչարողներուն համար աղօթեց. «Հայր, ներէ անոնց»: Օրհնեալ օրինակ:

Եղքայրներ, ներենք իրարու. ներելը մեծ հոգիներու զործ է, Յիսուսի օրինակն է, ճշմարիտ մեծութիւնն է: Ներենք իրարու՝ որովհետեւ եղքայր ենք մենք, ներենք իրարու, որովհետեւ մեր պարտապաններն ալ մեր եղքայրներն են. ներենք իրարու ամէն օր, եթէ կ'ուզենք Աստուծոյ ներումը վայելել ամէն օր: Ներող սիրտեր երջանիկ սիրտեր են, որովհետեւ հաւատքը ունին ներման: Ներենք իրարու և այնպէս աղօթենք և եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց: Առանց ներող այս զգացման՝ վախնանք այսպէս աղօթելէ: Կեղծիքը՝ խարել է, և Աստուծ չի խարուիր . . . :

ԳՐ. ՄՐԿ. Հ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ

(Նարունակելի՝ 15)

ԱՆՄԱՀՈՒԹԵԱՆ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Մենք կուզանք, հետեւաբար, անդըրգերկմանական կեանքի կարելիութեան մասին մեր վիճաբանութեան այն գժուար հարցին, որուն մէջ անմահութեան գէմ եղած բոլոր միւս առարկութիւնները ունին իրենց գագաթնահայեցութիւնը, միտքը բացարձակապէս ուղեղէն կախեալ չէ: Ոչ թէ բարեւրջական վարդապետութիւնը, այլ անհատականութեան փիզիքական հիման աշխատանոցային ուսումնասիրութիւնն է որ այս հարցը կուտայ մեզի ամենէն աւելի: Կուսարանելի իրողութիւններուն չուրջ այլես ոչ մէկ կասկած կայ: Անընդհատ խաւ գորչ նիւթի, թանձրութիւնը 1/12էն մինչև 1/8 ինչէղ ու ինք իր վրայ ծալլուած, «ինչպէս պիտի ծալլէինք թաշկինակ մը», կը կազմէ ուղեղին արտաքին մակերեսը: Մարդկի բնաւ չեն կրնար մտածել առանց այս փափուկ և բարձրօրէն կազմակերպուած ջղային հիւսուածին զործակցութեանը: Իւրաքանչիւր հոգերանական պաշտօն ունի իր մասնաւոր րլթակը կամ գալարը գորչ նիւթին մէջ, առանց որուն համապատասխան մտաւորական զործունէութիւն բոլորովին անկարելի է: Բազմաթիւ պարագաներու մէջ զգայուն մակերեսին ճիշդ այն տեղը, ուր իմացական զործունէութեան մասնաւոր ձեւերը կը չարունակուին, ծանօթ է հոգերաններուն: Անոնք կը ճանչնան ուղեղին այն մակերեսը որով կը լսենք, այն մակերեսը օրով կը տեսնենք. անոնք կը ճանչնան այն ըլլթակները որոնցմով մենք կը շարժենք մեր բացուկներն ու սրունգները, մեր ըրթունքները և լեզուն և աչքերը. անոնք կը ճանչնան այն գալարը ուր խօսքի պաշտօնը կը կատարուի և առանց որուն բացարձակ խորհուրդը անկարելի է: Անոնք նոյն իսկ կրնան զատորուշել մակարդակը օրով բառեր կը լսենք այն մակարդակն օրով կը կարդանք զանոնք: Ոչինչ աւելի պարզ է քան այն թէ մարդոց միտքերուն իւրաքանչիւր պաշտօնավարութեան համար կայ համապատասխան մասնկային զործունէութիւն մը ուղեղին զորչ նիւթին մէջ: Նախ

և առաջ անխուսափելի կը թուի եղբակաց ցութիւնը թէ միտքը բացարձակապէս կախում ունի ֆիզիքական կազմութենէն և անբաժան է անկէ:

Լաւ է արձանագրել թէ ինչպէս որ ցեղային բարեշրջութեան վարդապետութիւնը միայն աւելի ստիլողական կը դարձնէ խընդիր մը որ միշտ նկատի առնուած է անոնց կողմէ, որոնք կը հսկէին ու եւ է անհատի զարգացմանը, այնպէս ալ հսու բնախօսական հոգեբանութեան գիւտերը միայն կը հաստատին աւելի մեծ մասնաւորութեամբ և ապահովութեամբ ինչ որ ամէն մարդու հասարակ փորձառութիւնն է: Գիտենք որ կախում ունինք մեր ուղեղներէն: Ամէն ջերմ որ կը խափանէ մեր ջղային զրութիւնները, ամէն անդամալուծական հարուած որ կը հարուածէ ուղեղին աջ կիսագունտը՝ կ'անդամալուծէ մարմին ձախ կողմը, ամէն հիւանդութիւն որ կը պակսեցնէ մեր խորհելու կարողութիւնը անկարողութեան մատնելով այն շինուածքը որով մեր մտածումը կատարուելու է, կ'ըսէ ժողովրդական բարբառով ինչ որ հոգեբանները կը հաստատեն գիտական ասացուածքներով, թէ մենք կախում ունինք մեր ուղեղներէն: Երբ բարի նկարագիր մը կ'այլափոխուի գանկին վրայ հարուած մը ընդունելով, և կը նորոգուի վիրաբոյժներուն կողմէ որոնք կը ծակեն գանկին ոսկորը և կը թեթեւցնեն տակի գալարին վրայի ճնշումը, միայն այդ իրողութիւնը աւելի կենդանի և բացայայտ կը դարձնէ ինչ որ ամէն հասարակ մարդ գիտէ թէ առողջ անհատականութեան խիստ անհրաժեշտ է իր ջղային զրութեան առողջ վիճակը: Էական խնդիրը փոխուած չէ բնախօսական խուզարկուներուն արդի գիւտերով, միայն աւելի ակներե, աւելի պարագայական և աւելի ստիլողական դարձած է: Մաքին և ուղեղին միջն սերտ յարաբերութիւնը այնչափ մանրամասնօրէն լուսաբանուած է, ստուգելի և յստակ փորձերով այնչափ ապացուցուած է, որ արդի մարդուն կը մնայ ըսել վճռականութեամբ և ապահովութեամբ ինչ որ իր անձնական փորձառութիւնը երբեք պիտի չարտադրէր իր մէջը, թէ իր անհատականութիւնը բացարձակապէս կախում ունի իր ուղեղէն: Մենք ի՞նչպէս կրնանք բաժանելի ենք լուսաբանութեան մասին ընդարձակ է և ճշգրիտ և որոնց յոյսը անմահութեան մասին տա-

ջղային զրութիւնները այնչափ անլուծելի են երեւութապէս:

Մեր սկզբնական վախը թէ մեր միտքերուն մեր ուղեղներէն կախումը պէտք է վճռաբար վանէ անմահութեան յոյսը՝ կերպով մը կը մնացանայ երբ կը դառնանք գիրքերուն, ինչպէս Տօքթոր Թօմփուլնի «Ուղեղ և Անհատականութիւն» անուն աշխատութեանը: Ահա մարդ մը որ կը ճանչնայ իրողութիւնները, և անոնց լուսաբանութեան և անոնցմէ հանուած եղբակացութեանը ճամբուն մէջ ոչ նուազ պատկառելի դեր մը խաղացած է: Արչափ որ, սակայն, նա հեռու է համոզուելի թէ անոնք կը նշանակեն մարդուն անէացումը մահուան մէջ, թէ ըստ իրեն ուղեղին կազմակերպութեան մանրամասնութիւնները և այն ճամբան որուն մէջ հոգեբանական պաշտօնավարութեան կեղրոնները պարսպուած են իր մակերեւոյթին գորշ նիւթին մէջ, կը թուին յատակօրէն մատնանշել, թէ ուղեղը չէ որ կը չինէ մարդը, այլ թէ մարդնէ որ կը գործածէ ուղեղը իրը իր գործիքը և կը գաստիարակէ զայն ծառայելու համար իր կամքին: Եթէ գորշ նիւթը շինեց մարդը, կը փաստէ ան, որչափ չառ ըլլայ գորշ նիւթը այնչափ աւելի կարելիութիւն կայ անձնական իշխանութեան: Բայց, ընդհակառակը, ոչ միայն միջակէն վար ծանրութեամբ ուղեղներու ընկերացած ամենամեծ միտքերէն շատեր, այլ ամէն ուղեղի մէջ միայն մէկ կիսագունտ կը գործածուի մտածումի համար — ինչպէս մէկ աչք կրնայ գործածուիլ տեսնելու համար, այնպէս որ անդամալուծական հարուած մը կրնայ բոլորովին կործանել կիսագունտ մը և մարդը տակաւին խորհիլը շարունակել այնչափ յստակ որչափ կը մտածէր առաջ: Գորշ նիւթը չկազմեր մարդը, կը յայտարակէ ան, մարդը կը կազմակերպէ պղտիկ բաժին մը գորշ նիւթէն, և զայն կը գործածէ իրը կը գործիք մը մտածումի համար: Այսու հանդերձ մարդ կրնայ անհամաձայն գտնուիլ այս փաստին մասնաւոր կերպարանքներուն հետ, կամ այսու հանդերձ կրնայ անկարող ըլլալ հասկնալու փաստը ու է կերպով, եթէ նկատի առնէ հոյակապ խուզականութիւնը որոնց ծանօթութիւնը իրողութեանց մասին ընդարձակ է և ճշգրիտ և որոնց յոյսը անմահութեան մասին տա-

կաւին անխախտ է, ան կը տեսնէ որ կարելի մեկնութիւն մը ըլլալու է մտքին ուղեղէն կախման մասին, ինչ որ անպատճառ չժըլիւ տեր յաւիտենական կեանքի մասին յոյսը:

Պարզ է որ ֆիզիքական կազմուած քով ապրող էակի մը ներկայ պատահականութիւնը ըստինքեան չփաստեր թէ այդպիսի յարաբերութիւն մը յաւիտեան գուշւթիւն պիտի ունինայ: Խոզակին մէջի թըլլթուր կամ արգանդին մէջի երեխան, կամ հաւկիթին մէջի թռչունը, կախում ունին տաքութենէն և սնուցանող միջավայրէն, որոնց մէջ անոնք փակուած են և որոնց հետ կապուած են կապերով որոնք կը պայմանաւորեն իրենց գոյութեան կարելութիւնը: Բայց ներկայ յարաբերութիւնը մշտնջնական չէ: Կեանք մը կը գործէ ժամանակաւոր արգանդին մէջ որ օր մը պիտի գերազանցէ հին անհրաժեշտութիւնները: Այդպիսի նմանութիւն բոլորովին փաստ չէ մարդուն անմահութեան համար, բայց պարզ գիւտ մըն է այն իրողութեան, թէ կեանքի բացարձակ կախումը ֆիզիքական կազմութենէ կրնայ բնոյթ մը ունենալ որ կախումը ըլլայ ժամանակաւոր պատրաստութիւն մը ապազայ անկախութեան:

Այս թելադրութիւնը ամբողջօվին յարմար է մարդու ապազայ կեանքի խնդրին: Մտքի ներկայ պատահականութիւնը ուղեղի վրայ կը ժխտէ անմահութեան յոյսը միայն մէկ պայմանի տակ, թէ ուղեղը կը ստեղծէ միտքը: Եթէ մարդուն անտեսանելի եսը պայմանաւորուած է իր ֆիզիքական կազմութեամբ ինչպէս ծաղիկը իր կոռով, այն տաեն անոր ոչնչացումը ապահովուած է, բայց ի՞նչ ապահովուած է եթէ անոր անհատականութեան կախումը իր ջղային գրութենէն ըլլար հեռագրովի մը իր գործիքներէն ունեցած կախումին նման: Գիտութեան ծանօթ ամէն իրողութիւն առնըւազն այնչափ գոհացուցիչ կերպով բացարուած է վերջին զաղափարով որչափ առաջին զաղափարով: Մէկ կամ միւս պարագային մէջ, ֆիզիքական կազմին պատճառուած ոնկ վնաս կը նշանակէ համապատասխան անկարողութիւն կեանքին, որ իր արտայայտութեանը համար անկէ (ֆիզիքական կազմ) ունի կախում: Մարդ չի կրնար տեսնել առանց աչքի, բայց աչքերը մարդ չեն, ան չի կընար տեսնել առանց տեսողական ջիղին, բայց ջիղը մարդը չէ, ան չի կրնար տեսնել առանց ուղեղին տեսողական բլթակին, բայց տեսողականը մար-

դը չէ: Ինչո՞ւ համար անոնք չեն նման այն գործիքներուն զորս մարդ կը գործածէ, որոնց վրայ իր ներկայ գործունէութիւնը պատահական են, բայց որոնցմէ մեկուսի կրնայ տակաւին ապրիլ: Արովնեառ ամէն ինչ որ ոնէ խուզարկութիւն ստուգած է երբեք, այդպէս կրնայ ըլլալ պարագան: Գիտութիւնը գտած է միայն թէ մտքի ամէն գործունէութեան համար կայ համապատասխան հիւլէական փոփոխութիւն մը ուղեղին մէջ, և թէ հաւասարապէն նշմարիտ է թէ մենք ուղեղին կը նայինք իրեն գործակալ մը որ կը ստեղծէ միտքը կամ իրեն զործիք մը որուն վրայ միտքը կը խաղայ:

Եթէ մարդ մը կառքով պարտի, արտաքին աշխարհէն իր տպաւորութեան համար կախում ունի պատուհաններէն: Եթէ պատուհանները ծածկուած են վարագուրներով կամ ցեխոտ են, ան չի կրնար տեսնել: Ամէն ինչ որ կը պատահի պատուհաններուն կ'ազգէ իր կարողութեանը կամ գուրսէն տպաւորութիւններ ընդունելու կամ նշան տալու իր բարեկամներուն: Ատով չպացուցուիր թէ մարդը պատուհանին ապակին է, կամ պարզ չէ թէ ան չի կրնար օր մը թողուլ իր կառքը և տեսնել ամէն բան աւելի լաւ որովհեառ կին միջոցները հիմա վտարուած են: Մարդու մը իր գործիքներէն կախումը երբեք չի կրնար գործածուիլ ապացուցանելու թէ ան իր գործիքներն է կամ անոնց կողմէ ստեղծելուած է: Ամէն մարդ որ գիտէ բնախօսական հոգեբանութեան նշգրիտ գիւտերը, կը հասկնայ օր անոնք անմահութեան հարցը կը թողուն հոն ուր անոնք զայն տակաւին անպատասխանի գտած են: Գիտութիւնը ապահով է օր մտածումը և ուղեղին զործունէութիւնը հիմա ձեռք ձեռք կ'ընթանան, բայց թէ ուղեղը մտքին ստեղծողն է թէ պարզապէս մտքին ժամանակաւոր գործիքն է, ատիկա պիտի օրոշուի նկատողութիւններով որոնցմով չի կրնար զրազիլ բնախօսական աշխատանոցը: Ընդունուած է օր տարհամօղիչ են յաւիտենական կեանքի գէմ այն բոլոր առարկութիւնները որոնք հիմնուած են մտքին մարմինէն ներկայ կայ կախումին վրայ: Բրոֆէսէօր Ֆիսքէ կը հարցնէ թէ այս փաստը ի՞նչ զումար կը ներկայացնէ ընդդէմ այն հաւատքին թէ հոգին կ'ապրի մարմինէն վերջ: Պատասխանը ոչինչ է, բացարձակապէս ոչինչ: Ան ոչ միայն չշաղողիր հերքել հաւատքին նշմարութիւնը, այլ չբարձրացներ նոյնիսկ ամենէն թեթե ենթազրութիւնը անոր դէմ:

Ա.ՊՐԻԼ 24

Իմ պատմութեան գողգորան կերտող Ա.պրիլ Քսանչորս,
Հսէ, ի՞նչպէս մոռնամ մեզ, կրնա՞մ միքէ մոռնալ մեզ...
Դրացիս բարեկամ, դըրիր ձեռքին մէջ սուսեր
Հսիր, մըխէ՛ կուրծքին մէջ, մ'ըսեր ո՛չ ծեր, ո՛չ ծըծկեր...:

Դուն սառապանի բաշխեցիր. եղար նենգող, դաւադիր,
Մօսեցար զերք մըտերիմ, բռնած ձեռքէս պինդ, սարիր
Արեւելքի վաշկատուն հորդաներու ջոլիրէն,
Տարագրութեան անծանօթ նամբաներուն ալ մէջէն:

Ականջիս մէջ՝ խեղդամահ կուսաններու խուլ ճիշեր
Եղած մէկ մէկ երգեհոն, կուտան համերգ այս զիւեր.
Կ'առնեն քըրիչ սըլացիկ ինձ անծանօթ շիրիմներ,
Ու կը դառնան զէնի, սուսեր, անոնց օրինեալ նշխարներ:

Պիտի յիշեմ մեզ, Ա.պրիլ, որքան կանգուն է անխիղն
Իմ պապերուն, ձագերուն, Աստիղեան ցեղը դանին.
Պիտի սըրեմ ես ակռա՞յ, ու նամկերով քումաւոր
Յօսունեմ զայն, ու դընեմ ես զերեզման վիմափոր:

Մինչեւ մեկնիլս առ յաւէս, ժառանգաբաշխ իբրեւ հայր,
Ա.մէն տարի տոկոսով պիս կըտակեմ իմ արդար
Հարըստութիւնըս — Վլթէֆ —, որ իմ որդին ալ մեծցած
Աւերակացըդ վըրայ կերտէ կորող յաղբապանծ:

Գ. ՄՈՒՇԵՆՑ

... ՀՈԳԻՍ ՍԵՐԱՆ ՄԸՆ Է ԲԱՑ

To Mr. Paul Ledermann

Of the Cent. Laboratory, UNRWA, Jerusalem

Խմ եղբայրներ նեռաւոր, ցըրւած հիմա ամէն տեղ,
Զեզի համար կը զըրեմ ես այս տողերը ահա,
Բազմակրօն ընկերներ, բազմալեզու, բազմացեղ,
Կ'ուզէի որ ամենուդ բաշխուեր զերք մանանայ:

Կը բըրբատիմ յուշերուս էջերը երք մէկ առ մէկ,
(Ս.նուններն իսկ շատերուդ հիմա մոռցած ա'լ արդէն).
Կարծես դարեր են անցեր, կարծես ըլլար դեռ երեկ,
Երք հանդիպած ենք բախտով, յեսոյ զատուած ալ բախտէն:

Վաղը գուցէ հանդիպիմ ձեզմէ մէկուն ես փողոցն,
Ս.նցնիմ ժովլէն ես որպէս թէ զինքը չեմ նանչըցած,
Գուցէ այնպէս մը ցուցնեմ թ'իրեն համար սիրս է զոց,
Նոյնացեր էֆ սիրոյս մէջ սակայն ամէնիդ եւ Ասուած:

Յիշատակին՝ ամենուդ՝ նոզիս սեղան մըն է բաց,
Ժառանգութիւնը միակ իմ պապեւէս մընացած:

Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ



ԲՈՆԱՐԻՐԱԿԱՆ

ՄԻՆԱՐ ՆԿԱՐՈՂ

ԵՒ ԻՐ ԾԱՂԿԱԾ ՆԿԱՐՆԵՐԸ

«Արոն»ի Օգոստոս ամսուայ (1950) համարին մէջ Նորայր Վրդ. Մովսէկան կը ծանօթացնէ չքեզ Աւետարան մը որ վերջերս Տիար Գալուստ Կիւլպէնկեան նըւ- ւիրած է Ս. Յակոբի Կիւլպէնկեան Մատե- նադարանին։ Զեռագիրը գրուած է 1455ին Արճէշի մէջ Դաւիթ արեղայի կողմանէ, նկարողն է Մինաս որուն անունը կը կարդացուի Մատթէոս Աւետարանչի նկա- րին ներքեւ՝ «ՁՄինաս նկարող և զծնողսն իւրն յիշեցէք»։ Մինասի գործերէն յոդ- ուածագիրը կը յիշէ ուրիշ Աւետարան մը, գրուած 1469ին Արճէշի Ս. Դէորդ եկեղե- ցին, Յովհաննէս քահ. Մանկասարենցի ձեռքով և ուր ծաղկողը իր անունը նորէն Մատթէոսի նկարին ներքեւ գրած է՝ «ՁՄի- նաս նկարողս յիշեցէք ի Քրիստոս»։ Այս ձեռագիրը, որ այժմ նոյնպէս Ս. Յակոբի Մատենադարանը կը գտնուի, և կը կրէ 3427 թուահամարը, նախապէս կը պատ- կանէր Սերովք Սվաճեանի և Արշակ Զօ- պանեան անկէ լուսանցազարդ մը տպած է իր Roseraieին Բ. Հատորին մէջ, էջ 237։ Ուրիշ նմոյններ աւելի առաջ ալ ծանօթ- էին, արտատպուած 1899ին Tikkanan գիտ- նականի կողմանէ, երբ այս Աւետարանը F. F. Martinի հաւաքածոյին մէջ կը գտնուէր (J. J. Tikkanan, Tre Armeniska Miniatyr- handskrifter, Helsingfors, 1898, պատկ. 2, 19, 55)։

Նկարիչին անունը, ապրած տեղը ու ժամանակը, մանաւանդ իր արուեստին ոճը՝ որու մասին կարելի է կարծիք մը կազմել չնորհիւ «Արոն»ի մէջ տպուած եր- կու լուսանկարներուն և վերև յիշուած նմոյններուն, թոյլ կուտան այս մատենա- ներուն չուրջ խմբել Մինասի ուրիշ գոր- ծերը։ Պիտի նշանակեմ նախ այն ձեռա- գիրները որոնց անձամբ ծանօթ եմ և ո- րոնց մանրանկարները կարելի է բաղդատել երուաղէմի երկու Աւետարաններու պատ- կերագրութեան հետ։

Ասոնցմէ առաջինն է Բարիզի Ֆրան- սական Աղքային Մատենադարանի թիւ 18 Աւետարանը, գրուած 1456ին կտուց անա- պատը Խաչատուր արեղայի ձեռքով և նը- կարազարդուած Մինասի կողմանէ։ Տնօ- րինականներու շարքը, սկսեալ Ծնունդէն մինչև Հոգեգալուստը։ Ֆրէտէրիք Մաքլէր հրատարակած է իր Miniatures Arménientes, Vie de Christ աշխատանքին մէջ (Բարիզ 1913, պատկ. 31-41)։ Կան նաև Եւսեբիոսի նամակը և Եւսեբեան կանոնները զարդա- րուն խորաններով, չորս Աւետարանիչնե- րու նկարները, և կիսախորաններ մէն մի Աւետարանի սկիզբը։ Այս ձեռագրի յիշա- տակարանը խիստ թանկաղին է որովհետեւ միայն այստեղ Մինասի մասին որոշ տե- ղեկութիւններ կը գտնենք։ Կ'արժէ ու- րեմն մէջ բերել այս մասին բնագիրը, ուր Մաքլէր Քրանսերէն թարգմանութեամբ տուած է, էջ 310ը «Եւ գարձեալ աղաչեմ յիշել յաղաւթս ձեր զտր։ Մինաս քաջ նը- կարաւղն որ յար և նման է Բերսէլիէլի հոգիլնկալ առաջին նըկարողին տապանա- կին, և է՛ յաշակերտաց սր. վպտցն. Թու- մային մէջ, աւրէկէնց վկալին. և է բանի- բուն և հոգիլնկալ որպէս զվագտքն. իւր ամ. իմաստութեմբ. եւ եաւթնարփեան ջնաւքն. իլի. որ և զմեզ արժանի արար- իւրն ի ծառայութին. և հոգեօր խրատա- կան և եղբայրական սիրով սիրեաց զըմեզ և յոլով ժամանակս (էջ 311) կացաք ի միասին և վայելեցաք զնորա իմաստու- թին. և զիրատն։ Տր. ԱՃ արարիչն ամ. արարածոց որ զարդարէ զամ. արդարսն նոյնպէս լուսապայծ առ պատմուճանաւ և աստղալից պսակաւ զարդարենցէ զտր։ Մինաս նաղաջն և զհայրն իւր զմախթումն և զմայրն զմուրմելիքն, և զամ. արեան մերձաւորս իւր զկենդանի և զհանդուց- եալսն ամէն, եղցի. եղց.։

Կարելի էր ենթազրել որ Թումայ և Մկրտիչ վարդապետները Մինասի նկարչա- կան արուեստի ուսուցիչներն են, և ան- միջապէս մտքի առաջ կուգան Աղթամարի ծանօթ զրիչ և ծաղկող Թումայ Միակեացը կամ Թովմա վրդ. Մինասինցը։ Բայց սուրբ վարդապետից տիտղոսը, ինչպէս նաև ուրիշ պարագաներ որոնք վերջը կը տեսնենք, չտա աւելի հաւանական կը դարձնեն որ Մինասի ուսուցիչը պատմազիր

թուղմաս վրդ . Մեծոփեցին է , որ այս ձեռագրի գրչութեան թուականէն տասը տարի առաջ վախճանած էր : Իր երկրորդ ուսուցիչը՝ Մկրտիչ վրդ . Աւրէկէնց , որուն անունը Պղբեկենց , Օղուլրեկենց , կամ Օրբեկենց զրուած է ուրիշ ձեռագիրներու մէջ , Տէր Յուսկան որդւոյ վանահայրն է . Մեծոփեցին «սիրելին» և դասընկերը , աշակերտած անոր հետ Սարգիս Ապրակունեցիին մօտ և անդամակից էջմիածնի 1441 թուի միծ ժողովին (Մալաքիա Արքեպոս . Օրմանեան , Ազգապատում Բ . 1199 և 2106 , Գարեգին վրդ . Յովսէփեան , Նոր Նիւրից Թովմա Մեծոփեցու կենսագրութեան , Արարատ , 1913 , էջ 1156-7) :

Մինասի ծաղկած երկրորդ ձեռագիրը , Փոքր Սաղմոսարան և Աղօթամատոյց մը , կը պատկանի Նիւ Եօրքի Պր . Յարութիւն Հազարեանի : Դրուած է չի թուականութե . մերում ի Զէ (=1458) ի խանութե . Զհանշահ իմիրդին . . . ի հայրապետութե . տն . Դրիգորի Վաղարշապատու սր . էջմիածնի . . . յերկիրս Քաջրերունի , ի վանէս Խառարաստայ , ընդ հովանեաւ սր . Ածածնի խոյակածիննեանցն մէծին . . . յաջմիածնի սորա Զաքարէ պիտակ անուն վարդապետի և ծնաւղաց իւրոյ Յովհաննիսի և Մարիամի և հօրեղբարցն Գրիգոր եպոսի . և կիրակոսի . . . » Աղօթամատոյցէն առաջ զրուած յիշատակարանը կուտայ նաև ծաղկողի անունը : Ճառաջնորդութեն . տեղոյս Կարապետ վարդապետի , ձեռամբ յոզնամեղ և ապիկար գրչի Իգնատիոս կրաւնաւորի : Յիշատակ բարի և անջնջելի ստացողի սորա Զաքարէ պիտակ անուն վարդապետի և ծնաւղաց իւրոյ Յովհաննիսի և Մարիամի և հօրեղբարցն Գրիգոր եպոսի . և կիրակոսի . . . » Աղօթամատոյցէն առաջ զրուած յիշատակարանը կուտայ նաև ծաղկողի անունը : Ճառաջնորդութիւն . և զաւրութիւն . տկար և տարտամ անձանց մերոց , Իգնատիոս զրչի և Մինասի նկարողի սր . գրոց Սաղմոսարանի և Աղաւթամատուցի ի թուականութեան մերում ի Զէ ամի . . . :

Չեռագրին սկիզբը կայ ստացողի պատեկերը նստած , և առջնը երիտասարդ մը ծնրադիր : Ներքել զրուած է՝ «Զաքարիայ վրդպն . զՄկրտչն . եղբօրորդին իւր յիշէք ի բարին Քս . Սաղմոսարանի միւս նկարները կը ներկայացնեն Յովհաննէս վրդ . Գառնեցին , իր մեկնութեանը դիմաց նկարուած , կարմիր ծովէ անցքը , Մովսէս , Մարիամ և Խորայէլացքիք , Յովլսան և կէտը , Խաչելութիւնը (Ամբակումի աղօթքի դիմացը) , երեք մանկունք ի հնոցի , Մանասէ

ի խոր գրին : Աղօթամատոյցի մէջ Հոգեգալուստը նկարուած է համառօտ ձեռվ :

Մինասի երրորդ ձեռագիրը , Աւետառան մը , կը գտնուի նոյնպէս Նիւ Եօրք , Pierpond Morgan թանգարանը , թիւ 749 : Նախապէս այս Աւետառանը Շուշի քաղաքն էր , ուր Յարխութարեան յիշատակարանը մաս մը ընդօրինակած է (Արցախ , էջ 139-140) : Գրուած է Վարդան քահանայի ձեռքով սի քաղաքս որ կոչի Վան , ընդ հովանեաւ սր . Ածածնին և սր . Վարդան քաջ զօրագարին , ի թուականութեան Հայոց ԶՓ (=1461) ի հայրապետութիւն . Զաքարիայի , որ մին ամին է որ նստաւ յաթոռ սր . Լուսաւորչին ի յիշմիածինն . . . և մերոյ եպսացս . տր . Յովհաննիսեանցն մէծին եւ փոքրուն , սրբահողի և մաքրամիտ առաջնորդաց սր . ուխտիս վարագայ» : Ստացողն է Մկրտիչ քահանայ , որդի Ստեփաննոս քահանայի : Ինչպէս Երուսաղէմի երկու Աւետարաններուն մէջ , ծաղկողի անունը զրուած է միայն նկարներէն մէկուն ներքեւ՝ էջ Զբանաս նկարող յիշցք . ի բրն . Քս . և Ած զձեզ յիշէ :

Նորոգութեան ժամանակ սկզբի նկարներուն կարգը խանգարուած է և գոնէ մին — Համբարձումը — կորսուած է : Այժմ կան չորս Աւետարանիներու պատկերները , 13 տնօրինականներ , Աւետումէն մինչեւ Հոգեգալուստը , և տասնըչորսորդ նկար մը որ կը ներկայացնէ Գողգոթայի չքեզ խաչը Քրիստոսի պատկերով և ներքենը՝ ստացողք ծնրագիր :

Մինչեւ այժմ յիշուած ձեռագիրներուն մէջ նոյն արուեստը և նոյն ոճը կը տեսնեաք և Մինասի գործը ըլլալուն մասին որ և է կասկած կարելի չէ : Գալով յաջորդներուն , որոնց ծանօթ եմ միայն ցուցակներու նկարագրութեամբ կամ յիշատակարաններու արտագրութեամբ , այդ ալ շատ անգամ կրճատուած ձեռվ , հաւանաբար նոյն Մինասի կողմանէ ծաղկուած են , թէև արուեստը բաղդատելու առիթը չունինք և գժբախտարար Մինասի ծնողաց անուններն ալ տրուած չեն : Բայց կարելի է մեր կարծիքը հիմնել երկրորդական տուեալներու , և նկատի առնել զրչութեան ժամանակը , միջավայրը , գործակիցներու երբեմն ալ ստացողներու ինքնութիւնը , և վերջապէս այն պարագան որ Մինաս միշտ

իրը ծաղկող յիշուած է և ոչ իրը գրիչ։
1432 թուին, Տէր Յուսկան որդոյ վա-
նահայրը՝ Մկրտիչ վարդապետ, որդի Օր-
բէլի և Դովլաթի, Արճէլի մէջ Մաշտոց մը
զրել կուտայ կարապետ «Հանճարեղ և ի-
մաստուն քարտուղարին» և կը յիշէ, ի
միջի այլոց, աղերջանիկ և զքաջ հռետորն
և զտիկերալոյս բարունին զթովմայ որ
զօրինակս շնորհեաց և բազում բարու-
թիւնս եցոյց մեղ . . . նաև զհոգեոր որդ-
եակս իմ զՄինաս զպիրն որ զգիրս ծաղ-
կեաց» (Նօտարք, թիւ 102)։ Ինչպէս վե-
րև տեսանք, Մկրտիչ որդի Օրբէլի, կամ
Օրբէլէնց և Մկրտիչ Աւղքէկէնց միւնոյն
անձն են, ուստի իր հոգեոր որդեակ Մի-
նասը մեր նկարիչն է, որ 1456ի Բարիղի
Աւետարանին մէջ Մկրտիչ վարդապետի
աշակերտը կ'անուանուէր։ Այս Մաշտոցը
հաւանաբար Մինասի առաջին զործերէն
մէկն է, երբ տակաւին երիտասարդ էր և
միայն զպիր։

Նոյն Մկրտիչ վարդապետին հոգեոր մէկ
ուրիշ որդին՝ Գրիգոր կրօնաւորը՝ 1439ին
կ'ընդօրինակէ Աւետարան մը սի վանս որ
կոչի Արգելան», և կ'աղաջէ յիշել «զերա-
նաշնորհ վարդապետն Մկրտիչ զհոգեոր
ծնողն իմ և զուսուցիչն որ բազում աշ-
խատութեամբ ուսոյց ինձ զիր . . . զբարի
կրօնաւորն Մինաս, որ երփներին և ե-
րանգ երանգ գունով զարդարեաց զնեւ-
տարանս . . .» (Հ. Ռոկեան, Վասպուրական-
Վանի Վանիերը, Վիեննա, 1940, Ա. Մաս,
էջ 368)։ Այս Մինասը և 1432ին Մկրտիչ
վարդապետի համար աշխատողը նոյն անձն
են անշուշտ, ուրեմն հաւանաբար մեր նը-
կարողը։

Մինաս ծաղկողի անունը կը գտնուի
նաև Մեռելյարոյց կոչուած Աւետարանին
մէջ, զրուած 1445 թուին (Նօտարք, թիւ
154)։ Յովհաննէս Մանկասարենց զրիչը,
յիշելէ վերջ Աւետարածաբնակ սուրբ ուխտս
Մեծօփայ՝ սուրբ Աստուածածնի տաճարի
զթումայ մեծ բարունապետ և զՄկրտիչ
վարդապետ և վանքի միաբանները, կ'ա-
ւելցնէ։ «Արդ զրեցաւ սուրբ Աւետարանս
ի գաւառս Քաջրերունեաց, ի յԱստուածա-
պահ քաղաքս Արճէլ, ընդ հովանեաւ սուրբ
եկեղեցւոյս և ծաղկեցաւ ի սուրբ ուխտս
Մեծօփայ (ձեռամբ աստուածապատիւ . . .
և հեղահողի Մինաս կրօնաւորի)։ Փակա-

զիծերը Պետարքով հեղինակինն են, թե-
րես կը նշանակեն որ Մինասի անունը ձեւ-
ռագրի ուրիշ մէկ մասին մէջ կը գտնուէր
և հոս իր կողմանէ մէջ բերուած է։ Յով-
հաննէս Մանկասարենց, Թովմա Մեծօփե-
ցիի աշակերտը, անխոնիջ աշխատող մը ե-
ղած է որ ՀՅ տարի՝ ամառն և ձմեռն,
զիշեր և ցերեկ ի զրել եկաց» (Լալայեան,
Յուցակ, էջ 619)։ Իր օրինակած ձեռա-
գիրներէն քանիները ծանօթ են, բայց այս
տեղ կ'ուղենք յիշել միայն Երուսաղէմի
Թիւ 3427 Աւետարանը, որ ինչպէս տե-
սանք, Մինասը ծաղկած էր 1469ին։ Ուստի
1445ին ալ այս երկուքը կրնային միասին
աշխատած ըլլաւ։

1452ին Վարդան երէց կը զրէ Աւետա-
րան մը սի քաղաքս Վանս, որուն մէջ կը
խնդրէ յիշել «ի Քրիստոս զՄինաս ծաղ-
կողն» (Նօտարք, թիւ 186)։ Վարդան զրիչը,
Յովհաննէս քահանայի և Զմրութի որդին,
նոյն անձն է որ 1461ին Վանի մէջ կը զրէ
այն Աւետարանը որ այժմ Բյերոն Morgan
թանգարան կը գտնուի և որ Մինաս ծաղ-
կած է։ Քրիչներու նոյնութիւնը, նկարող-
ներուն ալ նոյնութիւնը կը թելագրէ։

Քաղաքական այն շփոթ և գժուար
տարիներուն, երբ շատեր ստիպուած էին
փախչիլ մէկ վանքէն միւսը, Ղաղար զրիչ
և իր ընկերները, Անդրէս և Յովհաննէս
քահանայ, 1452ին կը սկսին զրել Յայս-
մաւուրք մը Լիմ կղզիի մէջ, կը շարու-
նակեն «յերկիրս Քաջրերունի, ի վանս Առւ-
խարայ», կամ Խառարաստայ վանքը, յե-
տոյ կ'ապաստանին սի վանս Արգելան . . .
վասն խռովութե . աշխարհիս Հայոց», եւ
միայն 1457ին կրնան իրենց աշխատանքը
աւարտել։ Ստացողն է մահուեսի Ստե-
ֆաննոս Ղարիպչահ։ Այս ձեռագրի մէջ ալ,
ինչպէս քանից տեսանք, ծաղկողը իր ա-
նունը կը զրէ մեծաղիր պատկերին ներքեւ՝
էջ 4ր. «ԶՄինաս նկարող ի տր. յշց . . .
(Աճառեան, Յուցակ . . . Թաւրիզի, թիւ 39,
էջ 102)։

1460ին Յովհաննէս քահանայ նոյն
Ստեփաննոս Ղարիպչահի համար ձաշոց մը
կ'օրինակէ Արծէկ քաղաքը և մեծ գովկս-
տով կը խօսի իր աշխատակից ատէր Մինաս
քաջ նկարող»ի մասին՝ «Եւ աղաչեմ յիշել
ի տէր Աստուած զանյաղթ նկարող սորա-
զտէր Մինաս սրբասնեալ կրօնաւորն, ըլ-

քաղցրատեսն և զհեզահոգին, զողորմածն և զաղքատասէրն . . . որ և գ. տարի եղաբայրական սիրով նախախնամեաց զմեզ յԱղթամար կղզիս» (Հ. Ոսկեան, Վասպուրական-Վանի Վաները, Ա. Մաս էջ 118): Մեր Մինասի Աղթամար գտնուելուն մասին որ և է տեղեկութիւն չունինք, և այս յիշատակարանէն ալ յայտնի չէ թէ Գրիգոր գրիչը, որ 1460 ին Արձէկ կ'աշխատէր, ե՞րբ Աղթամար եղած է և Մինաս նկարողի հիւրասիրութիւնը վայելած: Բայց Մինասի արուեստի և անձնական յատկութիւններուն գովասանքը կը յիշեցնէ Խաչատուր աբեղայի խօսքերը մեր Մինասի մասին, զոր կը կարդանք 1456 թուի Բարիզի Աւետարանին մէջ:

Երկու անգամ՝ ևս Մինաս նկարողի անունը կը յիշուի: Թէս այս ձեռագիրներու գրչութեան տեղը հաշանակուած չէ, անտարակոյս Վանի շրջանին կը պատկանին: Առաջինը գրուած է 1437 և 1464 տարիներու մէջ «ի հայրապետութեան Զաքարիայ Աղթամարեցւոյ (1434-1464) և ի թագաւորութեան Զբհանչա զանին» (1437-1467) Ստեփաննոսի ձեռքով (Լալայեան, Ցուցակ, էջ 529): Աւետարանը զարդարուած է 14 տնօրինականներով և չորս Աւետարանիշներու պատկերներովը, և ինչպէս քանի անգամ տեսանք, նկարողին անունը կը կարդացուի նկարի մը ներքեւ՝ «ԶՄինաս նկարող մեզաւորս յիշման արժանի արարէք և Աստուած զձեզ յիշէ»:

Երկրորդ ձեռագիրը Շարակինց մըն է, Սիս գրուած, և այս բաւական՝ տարիներ վերջը սեկեալ հասաւ միշե (sic) ի տր. Զաքարիա կթման. ամենայն հայոց զոր ըստացաւ զսաւ և ետ եղբաւոր որդոյն իւրօյ Սըմբատ թղին. և նա ծախեաց և ըստացաւ զսաւ սրբասէր և բարեմիտ և հեղահոգի կրաւնաւորն Յովանէս և մայրն իւր Փաղամիլիքն . . . և ետուն վերըստին զարդարել զսա ոսկով և արծաթով»: Նորոգութիւնը կատարուած է 1465 ին «ի հայրապետութեան տն. Ստեփաննոս նորըծայ (sic) կթզկի.» և յիշատակարանի գրիչը կը խնդրէ յիշել «ի Բո. և զհըռչակաւոր և զանուանի նըկարողն ըզտր. Մինասն որ նկարեաց ըզտր. տնաւրինականքս որ կաի սմաս» (Leyden Or. 5521, տես F. Macler, Rapport sur une mission scientifique en Bel-

gique, Hollande, Danemark et Suède, Բարիզ, 1924, էջ 145-5): Ինչպէս կը տեսնուի յիշուած անուններէն ձեռագիրը Վանի շրջանէն բերուած էր: Մաքլէր Զաքարիան էջմիածնի կաթողիկոս կը կարծէր, և Ստեփաննոսը Սոսյ կաթողիկոս, բայց այս սիալէ: Առաջինը, Ամբատ թագաւորի հօրեղայրը, Աղթամարի Զաքարիա Գ.ն է, որ այդ տարիներուն ընդհանուր հայոց կաթողիկոսն էր, իսկ նորընծայ Ստեփաննոսը, Աղթամարի Ստեփաննոս Դ.ն է որ իսկապէս 1465 ին կաթողիկոս օծուեցաւ (Ն. Ակինեան, Գաւազնապիր Կարողիկոսաց Աղթամարայ, Վիեննա, 1920, էջ 95, 108-9): Անգամ մը ևս նկարողի մասին գրուած գովասանական խօսքերը ենթադրել կուտան որ այս ահռչակաւոր և անուանի նկարողը մեր Մինասն է: Դժբախտաբար տընօրինականները կորսուած են և կարելի չէ արուեստական փաստեր առաջ բերել:

Այս բազմաշխատ և ճարտար արուեստագէտին կարելի է ուրեմն վերագրել 13 ձեռագիրներ, հինգը հաստատ կերպով երաւագէմ, Բարիզ, Նիւ Եօրք Pierpond Morgan և Հազարեան), միւսները ենթագրապական բայց համոզիչ պարագաներով: Այս շարքէն դուրս կը ձգեմ այն մատեանները ուր Մինաս իրը գրիչ յիշուած է, և ոչ ծաղկող, ինչպէս 1456 ին Արձէլ գրուած Աւետարան մը (Լալայեան, Ցուցակ, էջ 423-4), կամ 1464 ին Արձէլ վանքը գրուած Շարակինց մը (Աճառեան, Հայոց Անձնանուններու Բառարան, Հատոր Պ. էջ 342, թիւ 28): Կարելի է սակայն որ Գրիգոր Արձէլցու քեռորդին Մինասը, որ 1427 ին իրեն կ'օգնէր թուութ կոկելով, մեր Մինասը ըլլայ, իր մանկութեան հասակին, երբ տակաւին նկարչութեան արուեստը չէր իւրացուցած (Վենետիկ, Ցուցակ, Ա. Հատոր, էջ 414):

Բացի 1432 ի Մաշտոցէն ուր Մինասը դպիր կոչուած է, մեր խմբած բոլոր ձեռագիրներուն մէջ իր անունը կը տրուի իրը տէր Մինաս, Մինաս կրօնաւոր կամ պարզապէս նկարող, և այս անունը շատ անգամ գրուած է միայն նկարի մը ներքեւ: Զեռագիրները օրինակուած են իրարու մօս քաղաքներու կամ զանքերու մէջ — Վան, Արձէլ, Արձէկ, Լիմ, Կոռուց, Արգելան, Խառարաստայ, Մեծոփ — ժամա-

նակի ճարտար գրիչներու կողմանէ: Ամանք Թովմաս Մեծոփեցիի աշակերտաներն են, ինչպէս Մինաս ինքը, ուրբմն նոյն մտաւուրական միջավայրի մարդիք: Իրենց ուսուցչի անունները յիշողներն են՝ Յովհաննէս Մանկասարենց, 1445 թուի և 1469 թուի Աւետարաններուն զրիչը, Ղազարը, որ 1452-1457ի Յայսմաւուրքի զիխաւոր զրիչն է, Կարապետը, 1432ի Մաշտոցի զրիչը: Այս Կարապետը, որ 1452էն առաջ նահատակուցաւ Արձէչի մէջ, իր Կարգին ուսուցիչը եղած է իր եղրօր՝ Վարդան քահանային, որ 1452 և 1461ի Աւետարաններուն զրիչն է:

Մինչև ցարդ ծանօթ ձեռապիրներէն դատելով Մինասի նկարչական գործունենութեան ըրջանը կը սկսի 1432ին և կը շարունակուի մինչև 1469ը: Այս թուականէն վերջը որոց տեղեկութիւն չունինք և չենք կրնար ըսել թէ արդեօք մեր նկարո՞ղն է այս տէր Մինասը զոր Կարապետ քահանայ կը յիշէ իրը իր ուսուցիչ 1473ին Բերկի գրած Աւետարանին մէջ (Լալայեան, Ցուցակ, էջ 468), կամ Կառուց անապատի միաբան Մինաս Շաղկողը, յիշուած 1483ին (Հ. Ասկեան, Վասպուրական-Վանի Վանեմիրը, Ա. Մաս, էջ 62):

Երուսաղէմի նորագոյն Աւետարանը Մինասի մեզ մնացած ձեռապիրներէն ամենաճոխն է: Սկիզբը զետեղուած են, բացի 1456 և 1469ի Աւետարաններու մէջ գտնուող տնօրինականներէն, և Գողգոթայի խաչի և ստացողներու պատկերէն, որ 1469ի Աւետարանին մէջ ալ կայ, երեք ուրիշ նկարներ — Յեսուի ծառը, վերջին դատաստանը և Եղեկիէլի տեսիլը: Երուսաղէմի Աւետարանը աւելի ճոխ է նոյնպէս լուսանցքի նկարներովը: Մինչ միւս երկութին մէջ Մինաս նկարած է միայն իւղաբեր կնոջ մը և Յովսէփ Արեմաթացիի պատկերները, հոս ներկայացուցած է Քրիստոսի կեանքէն կարգ մը տեսարաններ:

Տէրունականներու շարքին կցուած երեք նկարները խիստ շահեկան են ժե. Դարու պատկերազրութեան ուսումնասիրութեան համար և կը ցաւիմ որ վերջին դատաստանը և Եղեկիէլի տեսիլին լուսանկարները չեն տպուած: Աւելի հին Աստուածաշունչերու մէջ Եղեկիէլի տեսիլը իր մարգարէութեան զրքին սկիզբը նկարուած

է, օրինակի համար Երուսաղէմի թիւ 1925 մատեանի մէջ զրուած եւ ծաղկուած 1269ին, բայց Մինասի նկարը ինձի ծանօթ առաջին օրինակն է Աւետարանի մը մէջ:

Յեսուէի ծառը եւրոպական արուեստի յատուկ մօթիք մըն է ժբ. գարէն սկսեալ, իսկ հայ ձեռապիրներու մէջ առաջին անգամ կը տեսնենք ժՊ. գարու երկրորդ կիսուն և Կիլիկեան արուեստագէտները զայն կը ներկայացնեն Մատթէոսի Աւետարանի առաջին էջի լուսանցքի վրայ, ինչպէս Վասակ իշխանի Աւետարանին մէջ (Երուսաղէմ թիւ 2568): Հետեւեալ գարուն թորոս Տարօնեցին բոլոր էջ մը կը յատկացնէ այս պատկերին Գլածոր ծաղկած իր Աստուածաշունչին մէջ (Էջմիածին թիւ 182): Թէ այս, թէ կիլիկեան օրինակները կը տարբերին Մինասի նկարէն (Սիոն պատկ. 1), սակայն Մինասը այս նոր ձեւը ինքը չէ հնարած, ոչ ալ առաջին արուեստագէտն է որ տէրունականներու շարքը կը սկսի Քրիստոսի մարգեղութեան այս symbolicque պատկերովը: Իրմէ առաջ Մկրտիչ Նաղազ Յեսուէի ծառը ներկայացուցած էր նոյն տեղը և նոյն ձեռով 1418-1422 թուին Խաթ գրուած Աստուածաշունչին մէջ (Վենետիկ, թիւ 280 [10]):

Մինասի արուեստը լրջօրէն ուսումնասիրելու համար պէտք է ոչ միայն Երուսաղէմի Աւետարանին ծանօթանալ բայց և իր գործերը բազդատել ժամանակակից ուրիշ պատկերազարդ ձեռապիրներու հետայս յօդուածով ուզեցի միայն իր մասին մեր ունեցած տեղեկութիւնները հաւաքել և ցոյց տալ որ ան կարեսր տեղ մը կը զրաւէ ժե. գարու գեղարուեստական պատմութեան մէջ: Տիար Կիւլպէնկեանի նուէրով՝ Երուսաղէմի Կիւլպէնկեան ճոխ մատենագարանը այժմ ունի ժե. գարու անուանի նկարողներէն մէկուն ամենաընտիր գործը և շատ զնահատելի է որ նորայր Վրդ. Ծովականը փութացած է զայն ծանօթացնել Սիոնի ընթերցողներուն: Կը յուսանք որ իր այդ յօդուածը առաջինն է շարք մը ուրիշներու որոնցմով Ս. Յակոբի թանկագին մատեանները նոյն կերպով կը նկարողուն և եթէ կարելի է, անոնց նկարներէն աւելի տուած նմոյշներ ալ կը տրուին:

ՍիրԱՐՓԻ Տէր ներՍէՍեԱՆ

ԽՈՐԵՆԱՑԻ, ԵՂԻՇԵ

ԵՒ

Հ. ՆԵՐՍԵՍ ԱԿԻՆԵԱՆ

Ա. Մ Ա Ս

ԽՈՐԵՆԱՑԻ ԵՒ Հ. ԱԿԻՆԵԱՆ

Ինչպէս տեսանք, Հ. Ակինեան հիմնուած այն ենթադրութեան վրայ, որ Դեռնդ չէր կրնար ընթերցողէն բաժնուիլ տասնց հրաժեշտի ոզջոյնի մը, վիճակուքէ վերջ բազմահմուտ Հայրը մատը գրած էր Խորենացիի Պատմութեան վերջը գտնուող Ողբին վրայ և ըսած՝ ահաւասիկ Դեռնդի հուսկ քանքը:

Եւ Ողբի ոդիսականը կուտար այսպէս:

Դեռնդ Սրբաթական շրջանի 134 տարիներու պատմութիւնը գրեց լմացուց, և հոն զետեղեց Ողբը: Տասնվեց տարի վերջ գրի առաւ այս տասնվեց տարիներու պատմութիւնը, յիշեց նախապէս գրած Ողբը և փոփոխելով զայն, որպէսզի յարմարի աւելցուած մասին, գործածեր է որպէս վերջարան իր պատմութեան:

Ցիսուն տարի վերջ Խորենացին իր Պատմութիւնը գրած է (կը պնդենք յիսուն տարուայ վրայ, որովհետեւ Հ. Ակինեանի վերջին խօսքն է Խորենացիի Պատմութեան թուականի մասին, և որովհետեւ տասնութ տարուայ ընթացքին իր իմաստութիւնը աւելի հասունցաւ, իր վերջին եզրակացութեան պիտի տանք առաջնութիւն): Խորենացին իր գիրքը լմացուցած և մեռած է: Ցեսոյ մարդուն մէկը նշմարեր է որ գրքի վերջաւորութիւնը յանկարծական է և անաւարտի տպաւորութիւն կը ձգէ: Խորենացիի Պատմութիւնը ընդօրինակեր է և Դեռնդի գրքին վերջաբանութիւնը — Ողբը — առեր և իր օրինակած ձեռագիրն վախճանին զետեղեր է:

«Զե՞նք կարող հաւատալ թէ Մովսէս ինքնին կատարեց այս գողութիւնը», կը գրէ Հ. Ակինեան, «և իւր գեղեցկահիւս Պատմութեան այսպիսի ցաւագար աւարտաբանութիւն մը տուաւ: Աւելի բանաւոր կը համարեմ ենթադրել թէ անաւարտ և Հայոց Պատմութեանը այս փականքը դրաւ:

օտար ձեռք մը, հեղինակին մահուանէն վերջ» (158):

Որպէսզի այս ոդիսականին հաւատ կարենանք ընծայել, պէտք է աչք գոցենք սա իրողութեան թէ, — միշտ ըստ Հ. Ակինեանի — մինչև Խորենացիի Պատմութեան որպէս «փականք» դրուիլը, 65—75 տարուայ ժամանակամիջոց մը կայ, որու ընթացքին Ողբը Դեռնդի գրքին մաս կը կազմէր: Դեռնդի ձեռագիրը հաւանարար այդ տարիներու միջացին բազմաթիւ ընդօրինակութիւններ ունեցած էր, և երբ կեղծարարը, Խորենացիի մահէն վերջ անոր Պատմութիւնը ընդօրինակած ատեն միտքը կը յանար Ողբը հոն փոխադրելու, զիտէր թէ Դեռնդի Պատմութեան ձեռագիր օրինակները գոյութիւն ունէին: Եւնոյնինքն իր կեղծիքը կատարած պահուն կարդացուած էին և կը կարգացուէին շատերէ, մանաւանդ բազմածիւղ Բագրատունի տան անդամներէն, թերեւս ընթերցողներու համար ամենէն աւելի ծանօթ մասն ալ Դեռնդի գրքին՝ էր հոետորական ոճով գրուած Ողբը և ամենէն ժողովրդականը: Հակառակ ատոր, կ'երեւի թէ կեղծարարը շարունակեց իր կեղծիքը, առանց վախնալու որ մէկը իրեն պիտի ըսէ: «Այ, մարդ, այս վերջաբանը իմ պապերուս օրերէն ի վեր Դեռնդի Պատմագրքին մէջ էր, ի՞նչ շահ ունիս ելեր ես երկու գրքերը իրար կը խառնես, ի՞նչ պիտի ընես հրապարակի վրայ գտնուող Դեռնդի բազմաթիւ ձեռագիրները»:

12

Ողբի գրութեան ժամանակը որոշելու համար Հ. Ակինեան բոլորովին կ'անտեսէ գահազրկուած թագաւորի ինքնութիւնը ճշտել, երկրորդական և անցողակի կարեւորութիւն միայն կուտայ և զհայրն իմ և զքահանայապետո, կամ հոգիւ և հովուակիցո, ու յալթականորէն կը յայտարարէ թէ, և ժամանակի նկատմամբ ելակէտ մը զտնելու համար ոտից կռուան պիտի ծառային մեզի բնութեան արհաւիրքներու մասին հաղորդած մանրամասնութիւնները (134):

Հ. Ակինեան Ողբէն կ'ընդօրինակէ այն տողերը որ իր ոտքին կռուան պիտի ծառային: Մենք ալ կ'ընդօրինակենք, քանզի վերջը պէտք պիտի ունենանք.

..... Եւ տարերց փոփոխել զբնութիւնս իւրեանց : Գարուն երաշտացեալ, ամառն անձրեւասոյց, աշուն ձմեռնացեալ, ձմեռն սաստկասառոյց, մըրկալից, յերկարեալ, հողմք փքարարք, խորչակարերք, ախտահաւաքք, ամպք հրընկէցք, կարկըտածուք, անձրեւք անժամանակք, եւ անպիտանք . օգք գառնաշունչք, եղեմնարկուք . ջրոց առաւելուն անօդուտ եւ նուազին անհնարաւորք . երկրի անբերութիւն պտղոց եւ անանելութիւնք կենդանեաց, այլ եւ սասանմունք եւ զղբմունք : Եւ ի վերայ այսր ամենայնի խոռովութիւնք յամենայն կողմանց . . . սովք անբաւք եւ հիւանդութիւնք եւ մահք բազմօրինակք :

Հ. Ակինեան սոյն մէջրերումը վերկ'առնէ որպէս պատմական իրողութիւն, քան դառնացած զրողի մը հաստորական արտայայտութիւն, եւ կ'ըսէ թէ, և Այս արհաւելիքները բնութեան մէջ յաճախ կրկնուած երեւոյթներէն չեն երեւար . . . Ռւսոի ինչ որ տեսած էր Հայաստան, նոյնը զգացուած պիտի ըլլար նաև սահմանակից աշխարհներու մէջն (135) :

Ռւսոի օտար զրողներու կը դիմէ, ուրոնց զրութեանց մէջ բնութեան զաժանութիւններու նկարագրութիւնը կայ: Հ. Ակինեան շատ ալ հոգ չըներ թէ Միջազգետքի կամ Պարսկաստանի մէջ պատահած հեղեղ, երկրաշարք, երաշտ ևայլն միթէ անպատճառ տեղի ունեցած կրնայի՞ն ըլլալ նաև Հայաստանի մէջ:

Այսպէս Դիոնիսիոս Թել-Մահրացւոյ ինչպէս նաև Միքայէլ Ասորիի ժամանակագրութիւններէն մէջրերումներ կ'ընէ:

762/63 թ Տիգրիսը կը յորդի, մեծ վնասներ կը հասցնէ . ահաւոր աւելածներ գործեց Մուսուլ: Տիգրիսի յորդումը անսովոր բան մը չէ, և իր պատճառած վնասը ընդհանրապէս Միջազեաքին աւելի կը հարուածէ քան Հայաստանին, որովհետեւ գետը իր սկիզբը կ'առնէ հարաւային Հայաստանէն, և իր յորդման սաստկութիւնը կ'աւելնայ դէպի Մուսուլի կողմը և անկէ անդին:

Տասը տարի վերջ, 772/73, ցանքերը չորցան, սովէ եղաւ: Հարուածը խստացաւ ամենէն աւելի Մուսուլ, արեւելք և հարաւու: Հ. Ակինեան Հայաստան ալ կը բերէ այս ալէտը, որպէսզի Ողբի պարունակութիւններու կ'աւելնայ դէպի Մուսուլի կողմը և անկէ անդին:

Բաշտացեալ» բառերը ապացուցուած ըլլան:

773/74, ձմեռը Հոկտեմբերին կը սկսի: Առատ ձիւն: Բայց ոչ անձրեւ մինչև Յունիս: Ձիւն և սառնամանիք: Այս պէտք է ընդունուի որպէս ապացոյց Ողբի, «աշուն ձմեռնացեալ, ձմեռն սաստկասառոյց, մըրկալից, յերկարեալ, հողմք փքարարք, խորչակարերք, ախտահաւաքք, ամպք հրընկէցք, կարկըտածուք, անձրեւք անժամանակք, եւ անպիտանք . օգք գառնաշունչք, եղեմնարկուք . ջրոց առաւելուն անօդուտ եւ նուազին անհնարաւորք . երկրի անբերութիւն պտղոց եւ անանելութիւնք կենդանեաց, այլ եւ սասանմունք եւ զղբմունք: Եւ ի վերայ այսր ամենայնի խոռովութիւնք յամենայն կողմանց . . . սովք անբաւք եւ հիւանդութիւնք եւ մահք բազմօրինակք :

Կարկուտի հատիկներ՝ կայծքարի մեծութեամբ, «ամպք հրընկէցք, կարկըտածուք»:

Մեծ սով և ատկէ ծագած համաճարակ հիւանդութիւններ:

Միքայէլ Ասորին կ'ակնարկէ սովին և համաճարակին, բայց կուտայ տեղւոյ անուններ: Ասորիիք, Միջազգետք և Ասորեստան: Հայաստանի մէջ ալ պատահած է: Զենք գիտեր:

Միքայէլ կը յիշէ 764/65 թն Խորասանի մէջ պատահած երկրաշարք մը: Թել-Մահրացին կը յիշատակէ երկրաշարք մը Միջազգետքի մէջ 755 թն: Խորասան և Միջազգետք ուր, Հայաստան ուր:

Թէս կը փորձուինք աւելի մանրակրկիտ կանգ առնել այս մէջրերումներու վրայ, բայց նոյնինքն Հ. Ակինեան թոյլ չի տար մեզ այդ ընելու: Ողբէն յիշած մէջրերումը, որը վերը արձանագրեցինք և որը բազմահմուտ Հայրը որպէս պատմական իրողութեանց նկարագրութիւն կը համարէր և Մուսուլ ու Խորասան կ'երթար պատցուցանելու համար, հազիւ 24 էջ յետոյ այդ միեւնոյն մէջրերումը կը հաչակէ օրպէս Ողբի հեղինակին կողմէ փոխառեալ հատուած մը Անանիա Շիրակացւոյ և Առխոստացեալսն» գրուածքէ: Էջ 164 թն կը զետեղէ սոյն մէջրերումը Ողբէն և անոր դիմաց կը գնէ Անանիայէն պատկան մասը: «Որպէսզի պարզ ըլլան ընթերցողներուս Ողբիս բնական և արուեստական արտայայտութիւնները, համեմատական պատկերներու մէջ պիտի ամփոփեմ փոխառեալ հատուածները» (159):

Օ՛ Հայր պատուական, ընթերցողներուգ պարզ ըլլալէ առաջ միթէ Չեզի պարզէ: Քսանը հինգ էջերու մէջ ի՞նչ մէջ տարբերութիւն: Եթէ Շիրակացիէն փոխ առնուած արուեստական արտայայտութիւն մըն էր, ի՞նչ հարկ կար հոս հոն վազվութելով Դիոնիսիոսը և Միքայէլը վկայութեան կանչելու որպէսզի ապացուցանես

թէ ուրիշէ փոխ առնուած արուեստական արտայայտութիւն մը չէ, այլ իրապէս հայստանի մէջ պատահած աղէտներու պատմական յիշատակութիւն :

13

755-762-764-772-773-774 թըւականներու յիշատակութիւններէն վերջ Հ. Ակինեան կ'ըսէ. «Այս համեմատութիւնները բաւական են արդէն մատնացոյց ընելու համար Ողբի գրուրեան տարին 773-774: (Ընդգծումը իրն է):

Բայց Ողբի մէջ յիշուած Հովուի և Հովուակցի մասին ճառելուն Հ. Ակինեան Հովիւը կը նկատէ Սիոն կաթողիկոսը, որուն մահը հաւանօրէն պատահեցաւ 774ին: Խոկ Հովուակիցը «կը տեսնեմ ես յանձին Եսայեալ կաթողիկոսի, որ զործեց 775-789 բազմավրդով ժամանակամիջոցի մէջ» (176):

Ողբի մէջ թէ Հովուի և թէ Հովուակցի մահն է որ կ'ողբայ գրողը, ի՞նչպէս 773-774ին գրի առած կրնար ըլլալ երը Հովուակիցը 789ին կը մեռնէր: Եթէ Հովուակցի մահէն վերջ գրուած էր, ալ փաստական ի՞նչ ուժ կը ներկայացնէր 20-25 տարի առաջ պատահած բնութեան խստութիւններու յիշատակումը:

«Ինձի կ'երեւայ թէ առաջին խմբագրութեան մէջ, գրուած 774ին, ողբերգուն աչքի առաջ ունեցած է Սիոն կաթողիկոսը և անոր մահը լացած, նա էր իր հայրն ու խնամածուն» (172):

Ուրեմն Սիօնն է նաև Դեւոնդը Բիւզանդիոն զրկողը: Հ. Ակինեանի պատասխանը «ինձի կ'երեւայ թէ նա է» պիտի ըլլայ:

Իրեն այդպէս «կ'երեւայ»ին համար ի՞նչ կոռւան ունի: Ոչինչ: Սիոն կաթողիկոսի գործունէութեան մասին բան չի գիտեր, տեղեակ չէ նաև Սիոնի և Դեւոնդի յարաբերութեան մասին, եթէ ունէին: Ինքն ալ այդպէս կ'ըսէ. «Զգիտենք մենք թէ ինչ աղերս ունեցած է Դեւոնդ Սիոն կաթողիկոսի հետ կաթողիկոսը իր կարճատես իշխանութեան ըրջանին հաւանօրէն մեծ գործունէութիւն մը չկրցաւ մշակել» (175):

Եւ երբ այս կարճատես իշխանութիւն ունեցած Սիոնը բաղդատես Ողբի մէջ

նկարուած հօր պատկերին, Հ. Ակինեանի ենթագրութիւնը կը մերժեն առանց այլեւալի:

«Աւազ զրկանացու . . . զիա՞րդ զմիտուիմ եւ զլեզուս պնդեցից, եւ հատուցից զրանս հարցն՝ փոխանակ ծննդեանն եւ սննդեանն . . . Այսպիսեաւ անձկաւ հեղձամզձուկ եղեալ՝ վտանգիմ կարօտութեամբ մերոյ հօրն: Ո՞ւր քաղցր աչացն հանդարտութիւն առ ուղիղս, եւ ահաւութեամբ մերու թեւրս. ո՞ւր զուարթ չըթանցն ժպտումն առ բարի աշակերտացն հանդիպումն, ո՞ւր խնդամիտ սիրտն ընդունող արբանեկաց. ո՞ւր երկայն ճանապարհաց յոյս հեշտացուցիչ, աշխատութեանցն հանգուցող կորեան ժողովողն, թագեան նաւահանգիստն, ելիք օգնականն, լուսացայնն յորդորեցուցիչ . . . Զհայրն իմ եւ զքահանայապետ զմիտոն վսիմացեալս, որ երթար տանէր կատարեալ բան, որով վառէրն եւ յարմարէր, եւ զերհսանակս ի բռուն առեալ՝ ուղղէր զգէմսն, եւ սանձահարէր զլեզուս օտարածայնս . . . » ևայլն:

Կարգալով Ողբի այս ցուցմունքները, և զիտնալով Ե. գարու երկրորդ կէսին Հայաստանի զրութիւնը, կը բացագանչեն թէ Սահակ Պարթէան է որ կը նկարուի հոս: Եւ Օրմանեան Սրբազնի բառերը կը վերյիշես.

«Եթէ Մովսէս Խորենացիի Պատմութեան թոււականի մասին ծանր խնդիրներ յուզուած չըլլային, շատ յարմար պիտի գար այն Ողբոց զլուխը, որով Պատմութիւնը կը փակուի, և որ ճշգիւ այդ միջոցին պատկերը կը կերպարանէ: Սահակի և Յովսէփի նման հոյակապ կաթողիկոսներու ետեւէն Մելիքէր և Մովսէս Ա. Մանազկերտացիի պէս ապիկարներ և անձնահաճներ տեսնելն է, որ հառաչել կուտայ պատմագրին, «Մովսէս բարձեալ լինի՛ և Յեսուս ոչ յաջորդէ, Եղիսա համբարձաւ և Եղիսէ ոչ մեաց'» (Ազգապատում. Հատոր Ա. էջ 453):

ՀՐԱՆԴ Ք. ԱՐՄԷՆ

(Եարունակելի՝ 4)



ՊԱՏՄԱԿԵՐ

ԵՂԻՇԵ ՊԱՏՄԱԳԻՐ

ԵՒ

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Եղիշե Վարդապետին կամ Եղիշե թարգմանիչ վարդապետի մը անուան կը վերագրուին այլևայլ հեղինակութիւններ։ Կը յիշատակէ իր պատմութեան մէջ յանուն եղիշէի։ Իսկ Յայտմաւուրքն ալ գործեր գրած ըլլայ, որոնք հետազային շփոթուած ըլլան եղիշե Պատմագրին գործերուն հետո Մինչև ցարդ մեզի հասած այդ գիրքերն են հետեւեալները։

Ա. — Բան խրատու յաղագս միանձանց։
Բ. — Մեկնութիւն Յեսուայ և դատաւորաց։

Գ. — Յաղօթս որ ասէ Հայր մեր որ յերկինս։

Դ. — Ի Մկրտութիւնն Քրիստոսի։

Ե. — Յայլակերպութիւնն Քրիստոսի։

Զ. — Ի Չարչարանսն Քրիստոսի։
(և ի Խաչելութիւնն, և ի Թաղումն և ի Յարութիւնն, և Յերեսմն աշակերտացն, և Յերեսմն Տեառն առ Տիբերեայ Շովուն, և ի Քարոզութիւնն Առաքելոց)։

Է. — Վասն Դատաստանին և միւսանգամ գալստեանն։

Ը. — Վասն Յիշատակաց Մեռելոց։

Թ. — Կանոնք։

Ժ. — Վասն հոգւոց մարդկան։

Ասոնցմէ զատ, կան նաև այլեւայլ ճառաեր և մեկնութիւններ։ Եղիշեի կը վերագրուի նաև Սրարածոց Մեկնութիւն մը, որ դժբախտաբար կորսուած է։ Վերոյիշեալ գիրքերուն մէջ, ոճի և լեզուի զանազանութիւններ կան։ Այս պատճառու, բանասէրներէն ոմանք տարբեր անձերու և տարբեր ժամանակներու վերագրած են զանոնք։ Հաւանական է որ, անոնցմէ մեծ մասը, թարգմանիչ Եղիշէին հեղինակութիւններն ըլլան։ Այս ճառերու մասին, կիրակոս Պատմիչ (ԺՓ. դար) այսպէս կը գրէ «Եղիշէ (դրեաց) զՊատմութիւն Սրբոց Վարդանանց և զգիրս կանոնացն, և այլ մեկնու-

թիւնս գրոց սրբոց և չարչարանաց Փըրկչին»։ Վարդան Պատմիչ «Սրարածոց մեկնութիւն»էն ինչ ինչ հատուածներ կը յիշատակէ իր պատմութեան մէջ յանուն եղիշէի։ Իսկ Յայտմաւուրքն ալ հետևեալ տեղեկութիւնները կուտայ այդ մասին։

«Արար մեկնութիւն գրոցն Արարածոց, և ճառս վասն Չարչարանացն Քրիստոսի, Թաղմանն և Յարութեանն։ և զիրս կանունականս համեղ եւ ախորժ բանիւք»։

Զ.

Յազկեց Բ. եւ իր նոպատակը. Մինրներսնի գործունեուրիւնը։

Յազկերտ Բ. ի (*) Յազաւորութիւնը 19 տարի տեսեց (438-457)։ Ան՝ մոլեսանդ և խստաբարոյ թագաւոր մը կը ներկայանայ մեզի։ Այնուամենայնիւ ան Սասանեանց Հարստութեան՝ իմաստուն և սակայն խորամանկ ու խորագէտ բնութեան տէր անձ մըն էր։ Հպարտ էր և ցասկոտ։ Կ'ըսուրի թէ համոզուած մոգ մըն էր ան։ Մոգութիւնը բովանդակ Պարսկաստանի մէջ տարածուած էր։ Մոգերը, որոնք Զրադաշտականութեան քուրմերն էին, մեծ հմտութիւն ունէին իրենց կրօնքին՝ վարդապետական, ծիսագիտական, արարողական և ծիսական խնդիրներու մէջ։ Մոգերը կը մշակէին նաեւ ինչ ինչ զիտութիւններ, Աստղաբաշխութիւն և թագուն գիտութիւններ (Sciences Occultes)։ Յազկերտ թագաւորին գիտումը, բնականաբար այլազան պատճառներ ունէր։ Անոնցմէ տռաջինն էր ապահովաբար քաղաքականը։ Ապա կու զար տնտեսական պատճառը։ Սակայն և այնպէս կրօնականն ալ նուազ կարեսոր տեղ մը չէր գրաւեր անոնց մէջ։ Սակայն մերերկու պատմիչներն ալ, ըլլայ Դազար Փարապեցին, ըլլայ Եղիշէն, տարբեր կերպով կը մեկնեն ու կը պատմին։ Յազկերտ թագաւոր, լոկ կրօնական պատճառներով կ'ուզէր Զրադաշտականութիւնը տարածել Հայաստանի մէջ։ Կրօնականը հաւանաբար իրբե-

(*) Յազկերտ Բ. Պռամ Ե. Գոր իր հօրը յաշորեց 438-ին։ Ուստի՝ Եղիշէին ըսած իշխանութեան կը տարիին կը համազատախանէ 441 թուականէն մինչև 448 (Յ. Պ.):

մեծագոյն ազդակ ծառայեց Յազկերտին իր կրկնակ գիտաւորութիւնները ի գործ դնելու Հայոց վրայ: Յազկերտ ուրիշ աւելի էական և կարևոր նպատակ մը ունէր. ան Հայերը Յոյներէն թէ՛ քաղաքակապէս և թէ՛ կրօնապէս բաժնել կ'ուզէր: Յազկերտ, տեսնելով որ յունական քաղաքականութիւնը և ազգեցութիւնը օրէ օր կը տարածուի Արեւելքի մէջ, ուզեց արգելք ըլլալ ասոր: Յազկերտ իր այս խորհուրդին մէջ մինակը չէր. իրեն կ'օժանդակէին, կը խրատէին և ուզզութիւն կուտային Պարսից մողերն ու կրօնականները: Մողերն ու կրօնականները անոր կոյր առաջնորդ մը կը հանդիսանան: Յազկերտ թագաւոր, անոնց հնագանդելէն ու հետեւելէ զատ ուրիշ միջոց չունէր: Աւելին, ան, ինքինքն քը հպարտ կը զգար երբ այդպիսի գործի մը ձեռնարկելու կը պատրաստուէր:

Միհրներսէն հազարապետ, Յազկերտ թագաւորին զլխաւոր խորհրդականը և աշխակիցը եղաւ: Յազկերտ թագաւոր, իր անօրէն խորհրդականին առաջնորդութեամբ գոտենապուած, Քրիստոնէութիւնը խարբէութիւն, ցնորք ու բանդագուշակութիւն կը նկատէր: Եւ Յազկերտ ամէն զինով ու ամէն միջոցներով աշխատեցաւ Քրիստոնէութիւնը ջնջել խսպառ Հայաստանէն: Եւ սկսաւ հալածանքի քաղաքականութեան: Մողերը և կրօնականները շարունակ Յազկերտ թագաւորը կը խրատէին. ո՛չ միայն կը խրատէին զայն, այլ նաև կը գրգռէին անոր կրօնական զգացումները ընդգէմ քըրիստոնէից և մանաւանդ ընդգէմ Հայոց:

Վաամ Ե. Գորի թագաւորութեան ըըրջանին, 428 թուականին, Սասանեանց Հասրատութիւնը յաջողեցաւ վերջ մը դնել Հայոց թագաւորութեան: Հայոց թագաւորութեան բարձումը արդիւնքն էր մեր նախարարներուն անմիաբանութեան և անհեռատեսութեան: Անկէց վերջ, հայ նախարարութիւններն էին որ Հայոց այրուձին և զօրքը պատերազմի կ'առաջնորդէին:

Եւ Հայոց զօրքը ի մասնաւոր այրուձին Պարսից Տէրութեան մէջ ամենէն լաւ կրուուղ և ամենէն լաւ պատերազմող բանակն էր, որ գովեստի, գնահատանքի արժանացած էր Պարսից թագաւորներէն և արքունիքէն:

Արշակունեաց Հարստութեան անկումէն

վերջ, հայ նախարարներու վիճակեցաւ երկրին կառավարութիւնը, որոնց մէջ ամենէն աչքառուն էր Մամիկոնեանները և նախարարն Հայոց անկանէր թագաւորութիւնն (Եղիշէ Ա. Յեղանակ): Հայոց մէջ բազմաթիւ էին նախարարութիւնները, ինչպէս Արծրունիները, Սիւնիները, Խորխոսունիները, Ռշտունիները, Պալունիները, Ապահունիները, Գնթունիները, Քաջընիները, Գնունիները, Կամարագանները, և լն. և լն.:

Սասանեանց Հարստութեան ըրջանին, Միհրներսէն հազարապետ հոյակապ և ազգեցիկ անձ մը կը ներկայանայ: Պարսիկ ժողովուրզը, շատ մեծ համարում և համականք ունէր անոր մասին և զայն շատ կը յարգէր: Վասնզի, ան հմուտ էր Պարսկական Օրէնքին և կրօնից և իրեն և ձիւրապատան Հիրպատա» (Խմաստնոց Խմաստուն) տիտղոսը տրուած էր: Միհրներսէն մեծ զիւանագէտ և հզօր միտք մը կը ներկայանայ: Միհրներսէն կազմակերպից Սասանեանց պետութիւնը և ինք ասով քաղաքական և կրօնական առաջնորդի մը գերը ստանձնեց Պարսից արքունիքէն ներս:

Սասանեանց Հարստութեան թագաւորութեանց ըրջանին, Յազկերտ Ա. ի (399-420) և անոր յաջորդ Վոամ Ե. Գորի (420-438) ժամանակ, Պարսից տէրութեան հրամանատար կարգուած էր: Միհրներսէն, Պարսից տէրութեան հազարապետն էր և անոր յարաբերական, տնտեսական, կրօնական և զինուորական ու քաղաքական գործերը իրեն յանձնուած էին:

Վոամ Ե. Գոր թագաւորը, Միհրներսէն իրեւ արտակարգ դեսպան դէպի Բիւզանդիոն (Կ. Պոլիս) զրկեց Յունաց թէողոս Բ. կայսեր մօտ, Յունաստանի և Պարսկաստանի միջն դաշինք մը կնքելու համար: Միհրներսէն Բիւզանդիոնի մէջ թէ՛ թէողոս կայսրէն և թէ՛ Յունաց արքունիքէն մեծ պատուվ և արտակարգ չուքով ընդունուեցաւ, և իր առաքելութիւնը յաջողութեամբ կատարելով՝ Պարսկաստան վերագարձաւ: Պարսից արքունիք երթալով, Վոամ Ե. Գոր թագաւորին յիշեցուց իր բազմաժամանակեայ պաշտօնավարութիւնը և Պարսից տէրութեան մատուցած բազմաթիւ ծառայութիւնները և իր ծերութիւնը իրեւ արդարացուցիչ պատճառ ցոյց տալով, թագաւորէն խնդրեց որ հանգստեան կոչումէ: Թա-

գաւորը, հակառակ իր կամքին, չկրցաւ մերժել անոր խնդրանքը, և Միհրներսեհ գնաց գէպի Արտաշէր Խավառնաւ:

Սակայն Վուամ թագաւոր, Միհրներսեհի հաւանութեամբ, իր քովը պահեց անոր երեք որդիները, որոնք իրենց հօրը նման իմաստուն, հանճարեղ և կրօնամոլ մարդիկ էին: Վուամ անոնց կարեսոր պաշտօններ տուաւ Սասաննեան պետութեան մէջ: Զարաւանդ՝ Մովպեստան Մովպետ էր. Մահպէշ, որ Պարսից արքունիքին համարակալն էր. Պիւրճ Յարդանտ, որ սպարապետի պաշտօն ունէր: Միհրներսեհ իր ծննդավայրը երթալով, հոն իր և երեք որդիներուն անունով չորս գիւղեր չինեց, չը մոռնալով սակայն հոն ատրուշաններ կանգնել: Միհրներսեհ չկրցաւ երկար ժամանակ հոն կենալ, վասնզի երբ Յազկերտ Բ. գահ բարձրացաւ (438), հրաւիրակներ դրկելով շուտափոյթ զայն իր նախկին բարձր պաշտօնին վերակոչեց, Պարսից տէրութեան դեկավարութիւնը կրկին անոր յանձնելով: Միհրներսեհ թէե դժոն մնաց, սակայն չը կրցաւ մերժել թագաւորին հրամանը: Եղիշէն Միհրներսեհի հետեւեալ տիտղոսը կու տայ. «Միհրներսեհ Վլըրուկ Հրամանատար Երան և Աներան»: ուրիշ անդ մըն ալ այսպէս կը նկարագրէ զայն. «Զծերն լի դառնութեամբ, յորում հանգուցնալ էր սատանայ զօրութեամբ իւրով, և բազում գործեալ էր նորա նախճիռս. որոյ կերակուր կամաց իւրոց էր ի մանկութենէ անարատ մարմին սրբոց, և ըմպելի անյազութեան նորին՝ արիւն անմեղաց» (Գ. Յեղանակի):

Ահա այդպիսի անարգ բնաւորութեամբ, խորամանկ, վատչուէր, չարաբարոյ, կրօնամոլ անձ մըն էր այս ծերուկը: Միհրներսեհ ո՞չ միայն հրամանատար էր Պարսկաստանի լնդարձակածաւալ կայսրութեան այլ նաև չարանենդ և չարամիտ խորհրդատու Յազկերտ Բ. ի., նոյնիսկ թագաւորն ալ, չատ անգամներ, անոր խորհուրդներուն մտիկ կ'ընէր և կ'անսար անոր: Մանաւանդ Յազկերտ թագաւոր, մոզերուն հետ խորհրդակցութեան ժամանակ, Միհրներսեհի խորհուրդներով կ'առաջնորդուէր:

Միհրներսեհ՝ Պարսից թագաւորին մօտ ամէն ինչ էր — խորհրդատու, առաջնորդ, գերակատար և գործիչ: Այս ալեհներ և իւմաստուն ծերը տարիներով իր միտքը չար-

չարած էր՝ միջոց մը, իմաստուն հնարք մը գտնելու, որպէսզի Հայերը բաժնէ Յոյներէն, իրբեք քրիստոնեայ երկու դաւանակից ժողովուրդներ: Այդ հնարքը գտած էր վերջապէս: Միակ իմաստուն հնարքը՝ Հայերը Յոյներէն քաղաքականապէս և թէ կրօնապէս բաժնելու համար, Հայերը պէտք էր Պարսից կրօնքին գարձնել, կրակապաշտ ընելով զանոնք: Փայտակարանի մէջ ծագած ապստամբութիւնը քննելու համար, Միհրներսեհ կուգայ հոն, թագաւորին հրամանաւ. Եղիշէն այսպէս կ'արտայայտուի այդ մասին. «Հասեալ մերձ ի սահմանն Հայոց, մտանէր ի քաղաքն Փայտակարան, և զգօրս ամենայն սփոկը տարածանէր շուրջ զքաղաքաւն առ ի զգուշութիւն պատրաստութեան իւրոյ չարահնար խորհրդոցն: Եւ յամուր որջն մտեալ հին վիշապն չարաթոյն, և բազում կեղծաւորութեամբ զինքն թագուցանելով յաներկեղութիւն, հեռաւորացն ահազին ձայնիւ սաստէր, և ի մերձաւորս իրբեք զօձ սողալով փչէր» (Գ. Յեղանակի):

Եղիշէն՝ Միհրներսեհի ունեցած պաշտօնին և մանաւանդ Յազկերտ թագաւորին վրայ անոր ունեցած ազգեցութեան մասին հետեւեալ հետաքրքրական տեղեկութիւնները կուտայ, որով երրորդ Յեղանակը կը վերջանայ. «Սա էր իշխան և հրամանատար ամենայն տէրութեանն Պարսից, որում անունն էր Միհրներսեհ, և չէր ոք ամենեին, որ իշխէր ըստ ձեռն նորա պահել: Եւ ոչ միայն մեծամեծք և փոքունք, այլ և ինքն թագաւորն (Յազկերտ Բ.) հրամանի նորա անսայր, որոյ և ձախող իրացն իսկ բուռն հարեալ էր նորա»: Արդարեւ, եղած բոլոր չարիքներուն, մեասներուն, հալած անաց զիխաւոր պատճառը Միհրներսեհ ինքը եղած էր, քանի որ «Մեծն Հաղարապետն (Միհրներսեհ) յոյժ էր յերկիւզի, քանզի ինքն էր պատճառք ամենայն չարեցն՝ զոր գործեաց» (Բ. Յեղանակի):

Դարձով Միհրներսեհի իրբեք պաշտօն տրուած «վզրուկ» բառին, այս բառը մեր գրչագիրներուն մէջ մի քանի փոփոխութիւններով գործածուած է, այսպէս. վրզրկի, վզրուկի, վզրուք, սակայն այս վերջինը նախընտրելի է: Իսկ վեզիր բառը վուզուրի արաբացեալ ձեն է: Պարսից տէրութեան մէջ՝ աւագ-հրամանատարութեան պաշտօնը

թագաւորէն վերջ ամենէն կարեռը պաշտօնն էր:

Եղիշէն Միհրներսեհի արուած պաշտօնը զբաթէ պարսկերէնով կը դնէ. «Միհրներսեհի վիւզիւրք ֆրամատար երան ու Անիրան»։ այսինքն՝ Միհրներսեհ վզրուկ (աւագ կամ մեծ) հրամանատար Արեաց և Անարեաց (բնագրին մէջ՝ երան և Անիրան)։ Կարգ մը ձեռագիրներու մէջ Անիրան բառը եղած է Տաներան, սխալ գրչագրութեամբ անշուշտ:

(Նարունակելի՝ 3)

Արիք և Անարիք. Արիք անունը կը տրուի այն ցեղերուն, որ Հնդուքուշ ստրահարթին և Բամիրի շրջակաները կը բընակէին։ Սակայն երբ այդ ցեղերը երկու մասերու բաժնուեցան և մէկ մասը զէպի Հնդկաստան գնաց, այս անունը Պարսկաստանի կողմէրը մնացողներուն յատուկ դարձաւ։ Բաց աստի՛ Մարեր, Պարթևներ, Բակտրիացիներ, Պարսիկներ միննոյն անունով կը յորչորչուէին։

ՊԱՐԳԵԼԻ ՎՐԴ. ՎՐԹԱՆԿՍԵԱՆ

ԳԵՐ. Տ. ԿԱՐԱՊԵՏ Ս. ԱՐՔԵՊՈ. ՄԱԶԼՅՈՒՄԵԱՆ

Ցաւով կ'արծանագրենք Հայաստանեայց Եկեղեցւոյ եպիսկոպոսական դասու երիցագոյն անդամներէն ԳԵՐ. Տ. ԿԱՐԱՊԵՏ Ս. ԱՐՔԵՊՈ. ՄԱԶԼՅՈՒՄԵԱՆԻ մահը որ տեղի ունեցած է 2 Մայիս 1951 Զորեցարթի Աթէնքի մէջ։

ԳԵՐ. Արքազանը ծնած էր Պարտիզակ 1870ին, շրջանաւարտ տեղւոյն Ազգ. վարժարանին 1887ին, ծեռնադրուած 1894ին Պարտիզակի մէջ։ տեսուչ եւ ուսուցիչ Ազգ. վարժարանին (1893 - 1895), նոյն պաշտօններով Աստաբազար եւ քարոզիչ տեղւոյն Ս. Լուսաւորիչ եւ Ս. Կարապետ Եկեղեցիներուն (1895 - 1900), առաջ. փոխանորդ Նիկոմիդիոյ թեմին (1900 - 1905), նախ առաջ. տեղապահ Պանտրմա - Պալըքէսէրի եւ ապա առաջնորդ նոյն թեմին (1905 - 1908), եպիսկոպոս կը ծեռնադրուի 1910ին, 1915ին ընդհանուր պատերազմին՝ իր հօտին հետ տեղահանուած կը տարագրուի Քիլիսի եղիէ կոչուած վայրը։ 1916ին Երուսաղէմ կը հրաւիրուի իբր անդամ նորակազմ Սինոդի եւ մէկ տարիի չափ կը մնայ նոյն պաշտօնով։ 1917ին Սահակ կաթողիկոսի եւ ուրիշ սինոդականներուն հետ կը տարագրուի Դամասկոս՝ ուր կը կարգուի տեսուչ տեղւոյն որբանոցներուն։ Զինադադարէն վերջ կը մեկնի Պոլիս, ուրկէ կը գառնայ Պանտրմա։ բայց ըիշ յետոյ Քէմալական յարծակումներուն հետեւանքով կը ստիպուի թողուլ իր պաշտօնը եւ ժողովուրդին հետ մեկնիլ Պոլիս։ 1923ին Պատրիարքարանէն կը զրկուի Աթէնք իբր Լիազօր Բնենից, 1924ին ալ տեղւոյն Պատգամաւորական ժողովէն կ'ընտրուի առաջնորդ ու կը ստանայ Սմենայն Հայոց Վեհ։ Հայրապետէն վաւերացումի կոնդակը։ 1926ին կը շնորհուի արքութիւն։

1945ին իբրեւ կրօն. պատգամաւոր յցւնահայ գաղութին ան իր յառաջացեալ տարիքին հակառակ ճամբորդեց մինչեւ էջմիածին մասնակցելու Ամեն։ Հայոց Վեհ։ Հայրապետի ընտրութեան եւ օծման հանդիսութիւններուն։ Խակ վերադարձին աննկարագրելի նուիրումով օժանդակեց իր յցւնահայ հօտին դէպի Հայրենիք ներգաղթի ազգացէն ծեռնարկի իրագործման։

Երեսուն տարիներէ ի վեր ան կը վարէր յունահայոց թեմին առաջնորդական պաշտօնը ի յայտ բերելով կորովալից ու վարչական կարողութիւններով օժտուն ընթացք մը: Կը մեռնի թէեւ խոր ծերութեան մէջ, եւ սակայն արժանաւոր, հայրենասէր աւանդապահ ու նուիրեալ այս եկեղեցականին թողած բացը երկար ատեն պիտի մնայ զգալի Հայաստանեայց Ս. Եկեղեցիին համար:

Կ'աղօթենք որ Աստուած իրեն հարազատ Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ բացերը լեցնէ մեկնողներու փոխարէն պարզեւելով նոր մշակներ, իսկ իր այս հաւատարիմ ու ժողովրդանուէր պաշտօնէին հոգին լուսաւորեալ պայծառացնէ ի շարս Ս. Հայրապետաց Եկեղեցւոյ:

Տ. ՆԵՐՍԵՍ ՎՐԴ. ԹՈՐՈՍԵԱՆ

Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը խորունկ վիշտով կը գումէ իր երիցագոյն անդամ Հոգ. Տ. Ներսէս Վրդ. Թորոսեանի մահը, որ տեղի ունեցաւ 30 Ապրիլ 1951, երկուշարթի երեկոյեան ժամը 5.30-ին:

Հոգեշնորհ հայրը ծնած էր Քղի, 1883-ին, երուսաղէմ եկած եւ անդամակցած՝ Ս. Յակոբեանց Միաբանական Ս. Ուխտին եւ 1913-ին ծեռնադրուած վարդապետ: Վարձ է հետզհետէ հիւրընկալի եւ աւագ թարգմանի (1921-ին) պաշտօնները: 1922-1923 Բեթղիհէմի Տեսչութիւնը: 1924-1933 եղած է Տեսուչ Ռեմլէի Ս. Գէորգ վանքին, եւ 1933-1936 Տեսուչ Յոպակէի Ս. Նիկողայոս վանքին: Անկէ յետոյ փոխադրուելով Մայրավանք՝ ստանձնած է դարպամանկալի պաշտօնը եւ ընտրուած է անդամ Ս. Աթոռոյ Տնօրէն Ժողովի: Երեք տարիներէ ի վեր կը ժառայէր անկողնոյ, սրտի եւ կողատապի հիւանդութեան հետեւանքով: Վերջին երկու օրերուն ունեցած ուղեղային արիւնախունումը, փութացուց իր մահը:

Օժման եւ թաղման կարգը կատարուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ եւ ի ներկայութեան բովանդակ Միաբանութեան, եւ նախագահութեամբ Գեր. Տ. Մամրէ Ս. Արքեաս. Սիրուննեանի, որ այս առթիւ խօսեցաւ նաև պատշաճ դամբանական մը, վեր հանելով հանգուցեալ հօր արժանիքները ու ծգած բացը Ս. Յակոբեանց Միաբանական Ս. Ուխտէն ներս: Իր մարմինը ամփոփուեցաւ Զամ-թաղի գերեզմանատան մէջ:

Հանգուցեալ հայրառերի մահը զգալի բաց մը կը ծգէ մեր Միաբանական Ուխտէն ներս: Մաքրակինցաղ, խոհեմ, նախանձախնդիր, ժրաշան եւ Ս. Աթոռին շահերուն հոգեւին նուիրեալ եկեղեցական, իրեն յանձնուած բոլոր պարտականութիւնները ան կատարեց խղճմտանքով եւ Աթոռանուէր պատրաստակամութեամբ:

Կ'աղօթենք որ Տէրը վարձահատոյց լինի իր բազմաշխատ ու արդիւնաւոր պաշտօնէին, ու անոր հոգին հանգեցնէ իր լոյսի յաւիտենական կայաններուն մէջ:

Հանգիստ իր զուարթ հոգւոյն:

Ա. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԻՆ

ՀԵՌԱԳԻՒՐ Ա. Է. Ջ. ՄԻԱԾԱԾԱԿԻՆ

Ամենայն Հայոց Վ. Ե. Հայրապետին բասարուած է ընդհանուրական նետեւեալ նեռագիրը Ս. Զատկի առքիւ.

ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ

ԵՐՈՒՍԱՂԵՄ

Շնորհաւորութիւններ, Փրկի Յարութեան մեծ տօնին առիթով։ Լաւագոյն մաղթանքներ եւ օրնութիւններ Զեզ եւ Մեր սիրելի հօտին։

ԳԼՈՐԴ Զ.

ՀԱՆԳԻՄԱԿԱՐ ՅԻՇԱԾՈՒԹԻՒՆ

Կ. ՊՈԼՍՈՑ ՆՈՐԵՆՏԻՐ ՊԱՏՐԻԱՐՔ

Ա. Մ Ի Խ Ա. Պ Ո Ս Ի Խ

Տ. ԳՈՐԵԳԻՆ Ս. ԱՐՔԵՊՈ. ԽԱԶԱՏՈՒԹԵԱՆԻ

1 Ապրիլ, ՏԵՏԵԿԻ Կիրակին, Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. ՅԱԿՈԲԵԱՆՆ ՄԱՐՅ Տաճարին մէջ, պատարագին էր Հոգ. Տ. Գարեգին Արեղայ Գաղանձեան։ Էւսու առաւելչէն առաջ Հոգ. Տ. Հայկացուն Վրդ. Արքահամեան քարոզեց նիւթ ունենալով աւետարանական անիրաւ տնտեսի առակը։ Հոգեշնորհ Հայրը իր քարոզի ընթացքին ներկայացուց նաև անձն ու զործ կ. Պոլսոյ Խորընտիր Ամենապատիւ Սրբազն Պատրիարք Հօր։ Յետ քարոզի, նախազահութեամբ Գեր. Տեղապահ Հօր և մասնակցութեամբ բովանդակ Միաբանութեան կատարուեցաւ հոգեհանգիստ կ. Պոլսոյ նախորդ պատրիարք երանաշնորհ Տ. Մեռոպագ Ս. Արքեպոսկ. նարոյեանի հոգեոյն ի հանգիստ, որմէ յետոյ պատարագիչ Հայրը և սարկաւագունք հանդիսաւորապէս և առաջին անգամ ըլլալով յիշատակեցին անունը Խորընտիր Տ. Գարեգին Ս. Պատրիարք Հօր, մինչ միւս կողմէ մայրավանքի մեծ զանգը ի լուր բովանդակ Սաղիմանայ հաւատացելոց կ'աւետէր Հայց. Եկեղեցոյն համար բերկառութ պարագան, որով անոր պանծալի աթոռներէն մին անզամ մը ևս կը պայծառանայ, շուրջով ու չնորհով լեցուն արժանաւոր ընտրեալով մը։ — (Ս. Երուսաղէմի Աթոռին սովորութիւնն է եկեղեցական պաշտամանց ընթացքին, յիշել մեր նուիրապետական աթոռներու գահակալները, անոնց գահակալութեան հանդէսէն յետոյ միայն։ Մինչ այդ կը յիշատակուին նախորդ հանգուցեալ գահակալներու անունները)։

Ա. ՎԱՐԴԱՍԱՆՑ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ

ԹԱ.ՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Սինէ-ի Մարտի թիւին յիշատակած էինք Ս. Թաղաքիս ղանազան հայկական կազմակերպութիւններուն արքած Ս. Վարդանանց 1500-ամեակի տօնակատարութիւններ։

Առաջնորդ յետոյ 23 և 24 Մարտի երեկոներուն տրուեցաւ Ս. Վարդանանց յիշատակին նուիրուած թատերական երկու ներկայացումներ, Ս. Աթոռոյոյ ժամանգաւորաց Վարժարանի Տեղայան կողմէ։

Ներկայացուեցաւ «Վասակի Խղմատաքը» թատրոբազութիւնը, 1500-ամեակի առիթով պատրաստուած Ս. Աթոռոյոյ Միաբան Հոգ. Տ. Յարութիւն Վրդ. Մուշեանի կողմէ։ Խոկ ներկայացման զերակատարներն էին Ժամանգ. Վարժարանի առները, օժանգակութեամբ Հայ Երիտարարդացաց Միաւթեան անդամներուն։

Խաղարկութիւնը անցաւ բաւականին յաջող, և ներկաները ապրեցան զգացումներու զեղման պահեր։

ԱՄՍՈՐԵԱՅ ԼԱՏԵՐ

7 Ապրիլ Շբ. — Յետ միջօրէի ժամը 2 ին նախադանութեամբ Գեր. Տեղապահ Հօր, հոգեշնորհ Վարդապետ հայրեր պաշտօնական թափորսվ իշան Ս. Յարութիւն Տաճար։ Տաճարի մեծ մուտքին առջև կաղմուեցաւ «Հրաշափառչի թափորը», որ յառաջացաւ զեպի Փրկին Ս. Գերեզմանը, որուն ուխտի արարողութենէն յետոյ թափորը անցնելով տաճարի լատինաց Ս. Մարիամ Մաղաղակինացոյ մատուռէն, և շեօթն կամարք Ս. Կուսի շրջափակէն իջաւ Գիւտ Խաչի Այրը(*), հոն ևս կրկնուելէ հետք ուխտի արարողութիւնը թափորը բարձրացաւ Սրբազնը յարակից հայպատկան Ս. Գրիգոր Լուսաւորչի եկեղեցին։

(*) Գիւտ Խաչի Այրը թէիւ Լատինաց սեպհական թիւննէ, սակայն շաբաթը երեր անզամ թափորով կ'այցելենք եւ յատուկ աւետարանի ընթերցում կ'ունենանք Սրբատեղոյն վրայ։ Խոկ տարին երկու անզամ Գիւտ Խաչի տօնին եւ մեծի պահոց Դատաւորաց Շաբաթ եւ կիրակի օրերը Սրբատեղին յարակից հայպատկան Ս. Գրիգոր Լուսաւորչի եկեղեցին։ Այս օրերուն մեր ժամերգութիւնները կը կատարուին յարակից Ս. Գրիգոր Լուսաւորչի հայպատկան Եկեղեցին մէջ, ու մէջ ընդ մէջ արարողութեանց ընթացքին յատուկ թափորներով կ'իջնանք Գիւտ Խաչի Այրը խնկարկութեան եւ կամ ծիսակատարութեան համար։ Այս առթիւ նաև Ս. Յարութիւն Տաճարի մեր միաբաններէն մին 24 ժամեր շաբաթնակ կը հոկէ Սրբազնը մէջ, իսկ Սրբատեղոյն վրայ, 24 ժամեր կը պարի մեր կողմէ զետեղուած մեծ կերոն մը։

ուր պաշտուեցաւ երեկոյեան ժամերգութիւնն ու վաղուան հանդիսութեանց նախահանդեսը, նախագահութեամբ Դեր, Տեղապահ Հօր: Տնօրինական Ա. Տեղեաց այցելութեան թափորէն յետոյ, Դեր, Տեղապահ Հայրը և հոգեշնորհ վարդապետներ հանդիսական գնացքով վերադարձան մայրավանք:

8 Ապրիլ, Գատառի Կիրակին. — Առաւտեան ժամը 5 ին գլխաւորութեամբ Հոգ. Տ. Սուրէն Վրդ. Քէմհաճեանի, հոգեշնորհ վարդապետ հայրեր պաշտօնական թափորով իջան Ա. Յարութեան Տաճար: Շապկաւոր զոյդ մոմականներու ընկերակցութեամբ Գողգոթայի խաչելութեան տեղոյն (ուր ի պատիւ մեր հանդիսապետին՝ Յոյներ այդ պահուն փռած կ'ըլլան «խալիչա» ու կը սփռեն վարդիչուր) ուխտէն յետոյ, առաւտեան ժամերգութիւնը կատարուեցաւ Ա. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյն մէջ: Քիչ յետոյ Ա. Յարութեան Տաճարէն ներս հանդիսաւորապէս մուտք գործեց Դեր, Տեղապահ Հայրը ընկերակցութեամբ հոգեշնորհ հարց: Ճաշու երկարատեղ զանգականարութենէն վերջ, հանդիսաւոր Ա. Պատարագը մատուցուեցաւ քրիստոնի լուսափայլ Գերեզմանին վրայ: Պատարագին էր Ա. Աթոռոյ Պատրիարքական Տեղապահ Դեր. Հայրը: Յետ Ա. Պատարագի կատարուեցաւ օրուան երրազարձ մեծահանդէս թափորը Ա. Գերեզմանին և ապա Ա. Պատանատեղոյն շուրջ, նախագահութեամբ Դեր, Տեղապահ Հօր և մասնակցութեամբ բոլոնդակ Միաբանութեան և մեր զոյդ վարժարաններու ուսանողութեան, որոնց մէկ մասը վառեալ մամեզէններով կը ըրջապատէր Ա. Գերեզմանին շուրջ թափորական անցքին երկու կողմերը: Ա. Գերեզմանի զրան Յարութեան Աւատարանի ընթերցումէն յետոյ թափորը յառաջացաւ զէպի Ա. Լուսաւորիչ: ուր վերջ զտաւ այս սրբունուչ ու մեծահանդէս արարողութիւնը, որուն ներկայ էր ժողովուրդի հոծ բազմութիւնը: Ապա Դեր, Տեղապահ Հայրը ընկերակցութեամբ հոգեշնորհ հարց և ուսանողութեան հանդիսաւոր թափորով վերադարձաւ մայրավանք: Հայոց թաղի մատաքին թափորը ԱՌ պատուիրաններուն շարականի երգեցողութեամբ յառաջացաւ մինչև մայրավանք ու բարձրացաւ պատրիարքարան ուր Տեղապահ Հօր պահպանիչով և աջահամբայրի արարողութեամբ վերջ զտան օրուան հանդիսութիւնները:

13 Ապրիլ Ուր. — Երեկոյեան ժամերգութիւնն ու վաղուան տօնին նախատօնակը կատարուեցաւ Ա. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, նախագահութեամբ Հոգ. Տ. Սուրէն Վրդ. Քէմհաճեանի:

14 Ապրիլ Ուր. — Ա. Հօրն մերոյ Գրիգորի Եկեղեցի Լասաւորիցին՝ մասնելոյն ի վիրապն. — Յետ առաւտեան ժամերգութեան, ձեռամբ Հոգ. Տ. Սուրէն Վրդ. Քէմհաճեանի, Ա. Լուսաւորիչ մասունքը իր հանգստարանէն հանդիսաւոր թափորով վիսուալուեցաւ Ա. Յակոբեանց Տաճարի աւագիսունը: Ապա մատուցուեցաւ հանդիսաւոր Ա. Պատարագը Մայր Տաճարի Ա. Սուրենոս մատ-

րան մէջ՝ Ա. Լուսաւորիչի նուիրուած խորանին վրայ: Պատարագին էր Հոգ. Տ. Պարզեւ Վրդ. Վրթանէսեան:

Յետ միջօրէի ժամը 2 ին, նախագահութեամբ Հոգ. Տ. Սուրէն Վրդ. Քէմհաճեանի, հոգեշնորհ վարդապետ հայրեր ինքնաշարժերու շարքով մը մեկնեցան Համբարձման լեռ: Համբարձման Սըրբաւտեղւոյն վրայ կատարուեցաւ երեկոյեան ժամերգութիւնը և Համբարձման նախատօնակը^(*), իսկ արեւամարին Եկեղեցէ և Հսկում: Երեկոյեան ժամը 8 ին սկսաւ առաւտեան ժամերգութիւնը սրուն յաջորդեց Ա. Պատարագը, որ տեսեց մինչեւ կէս գիշեր, պատարագեց Հոգ. Տ. Գարեգին Արդ. Գաղանճեան, որմէ յետոյ Միաբանութիւն և հաւատացեալներ վերադարձան մայրավանք:

15 Ապրիլ, Գատսեան Կիրակի. — Առաւտեան ժամը 7 ին Հոգ. Տ. Սուրէն Վրդ. ի գլխաւորութեամբ՝ հոգեշնորհ վարդապետ հայրեր, ինքնաշարժերու զնացքով մը բարձրացան Համբարձման լեռ: Սըրբաւտեղւոյն մուտքը կատարուեցաւ վարչագաֆառու հանդիսութեամբ, որմէ յետոյ, Հոգ. Տ. Սուրէն Վրդ. Եպիսկոպոսական խոյր ի գլուխ պատարագեց Սըրբավայրին ընդհուպ՝ վրանամատուիրին տակ: Քարոզեց Հոգ. Տ. Միւրոն Վրդ. Կրճիկեան, Ներկայացնելով լուսաւորչի և անոր սերունդին կատարած վրկարար մեծագործութիւնները յօգուտ մեր Եկեղեցւոյն ու մեր ժողովուրդին: Յետ Ա. Պատարագի Միաբանութիւնը վերադարձաւ մայրավանք, պաշտօնական զնացքը:

19 Ապրիլ Եջ. — Երեկոյեան ժամերգութիւնը և վաղուան տօնին նախատօնակը կատարուեցաւ Ա. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, նախագահութեամբ Հոգ. Տ. Սուրէն Վրդ. Քէմհաճեանի:

20 Ապրիլ Ուր. — Աւետմին Ա. Ասուածածնի. — Առաւտուն՝ գլխաւորութեամբ Հոգ. Տ. Սուրէն Վրդ. Քէմհաճեանի, վարդապետ հայրեր պաշտօնական երթով իջան հեթանմանի Ա. Ասուածածնայ Տաճարը՝ Հրաշագաֆառի հանդիսաւոր մուտքէն յետոյ, Տիրամօր Ա. Գերեզմանին վրայ պատարագեց և բարողեց Հոգ. Տ. Ասողիկ Վրդ. Ղաղարեան:

21 Ապրիլ Ուր., Ցիւատակ Յարուբեան Ղաղարու. — Ա. Պատարագը մատուցուեցաւ ի Ա. Գլխազիր: Պատարագին էր Հոգ. Տ. Միւրոն Վրդ. Կրճիկեան: Ա. Պատարագի ընթացքին՝ Ա. Հաղորդու-

(*) Ա. Երուսաղէմի մէջ սովորութիւն է չամբարձման Սըրբաւեղին երթալ եւ Համբարձման տօնախմբութիւնը յանձնուած է տեղույն խլամ կրօնական կազմակերպութեան եւ տարին երկու անգամ չայ եւ Ցոյն համայնքներ ու տարին մէկ անգամ Լատին համայնքը, յիշեալ Սըրբաւեղւոյն վրայ կ'ունենան պաշտամունք եւ Ա. Պատարագը մատուցում:

թիւն ստացան՝ Ս. Թարգմանչաց Մանկապարտէղի ամբողջ աշակերտութիւնը:

— Յետ միջօրէի ժամը 2.30ին, նախագահութեամբ Գեր. Տ. Եղիշէ Վ.րդ. Տէրտէրեանի՝ հոգեշնորհ վարդապետ հայրեր պաշտօնական երթով իշան Ս. Յարութեան Տաճար: Տաճարի մուտքին կազմուեցաւ ՀՀրաշափառքի հանդիսաւոր թափօրը որ ուղղուեցաւ Փրկչին Ս. Գերեզմանը: Ս. Գերեզմանի ուխտէն յետոյ, թափօրը Ս. Գերեզմանին շուրջանակի զարձով մը բարձրացաւ մեր վերնատան մատուցը ուր պաշտօնեցաւ երեկոյեան ժամերգութիւնն ու Մազկազարդի նախատօնակը, որմէ յետոյ կատարուեցաւ Արբատեղեաց այցելութեան թափօրը:

22 Ապրիլ Կիրակի, Մազկազարդ. — Առաւոտուն՝ հանդիսապետութեամբ Հոգ. Տ. Պարզեւ Վ.րդ. Վ.րժանէսեանի, հոգեշնորհ վարդապետ հայրեր իշան Ս. Յարութեան Տաճարը: Գողգօթայի ուխտէն յետոյ Միաբանութիւնը բարձրացաւ վերնատան մեր մատուցը, ուր կատարուեցաւ առաւոտեան ժամերգութիւնը ու Մազկազարդի հանդիսաւոր՝ Ս. Պատարազը: Պատարազին էր Հոգ. Տ. Գարեգին Արդ. Գագաննեան: Յաւարա Ս. Պատարազի կատարուեցաւ օրուան մեծանանդէս թափօրը նախագահութեամբ Գեր. Տ. Մամրէ Ս. Արքեպոսկ. Ոիրունեանի, թափօրականի՝ արմափինեաց և ձիթենեաց ոսուեր ի ձեռին երեք անգամ զանալէ յետոյ Ս. Գերեզմանին շուրջ, անցան Ս. Պատանատեղին և ազա զարձեալ Փրկչին Ս. Գերեզմանը: ու յատուկ աւետարաններու ընթերցումէն յետոյ թափօրը աւարտեցաւ մեր վերնատան մատուցին մէջ: Ազա Գեր. Նախագահ Արքաղանը հոգեշնորհ վարդապետ հայրերու ընկերակցութեամբ պաշտօնական շքերթով վերադարձաւ մայրավանք, ճամրու կէսին թափօրը արարողական զնացքով և շաբականի երգեցողութեամբ յառաջացաւ զէպի մայրավանք, ու բարձրացաւ պատրիարքարան ուր Միաբանութիւն և ժաղովուրդ ընդունեցին Գեր. Արքաղանին օրունթիւնը:

— Յետ միջօրէի ժամը 3ին, կատարուեցաւ Ժաղկազարդի անդաստանը, ժամերգութիւնը և դուռացքի հանդիսութիւնը նախագահութեամբ Գեր. Տ. Մամրէ Ս. Արքեպոս. Ոիրունեանի, այս առթիւ քարոզեց Հոգ. Տ. Հայկազուն Վ.րդ. Արքահամեան:

24 Ապրիլ, Աւագ Երեխարքի. — Աննպաստ օդին պատճառաւ, այսօրուան Ս. Պատարազը որ սովորաբար կը մատուցուէր Ս. Յարութեան Տաճարի գութի Ս. Յովինանէս մատրան մէջ, կատարուեցաւ ի Ս. Յարութիւն հայապատեան Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյն մէջ: Առաւոտուն նախագահութեամբ Գեր. Տ. Մամրէ Ս. Արքեպոսկ. Ոիրունեանի օրուն կ'ընկերակցէր նաև Գեր. Տ. Զարեհն նույն Փայտալեան և հոգեշնորհ վարդապետ հայրեր՝ պաշտօնական թափօրով իշան Ս. Յարութիւն, այս թափօրին կը հետեւէր հաւատացեալ ժաղովուրդի ոտուար բազմութիւն մը և թարգմանչաց նախակրթարանի աշակերտութիւնը. թափօրը Ս. Գերեզմանի սովորական

ուխտէն յետոյ Լատինաց Ս. Մարիամ Մագդաղինացոյ մատուցին կողմէն իշան զէպի Ս. Լուսաւորիչ Եկեղեցին, ուր մատուցուեցաւ հանդիսաւոր Ս. Պատարազը: Պատարազին էր Հոգ. Տ. Յարութիւն Վ.րդ. Մուշեան: Ս. Պատարազի ընթացքին՝ Ս. Հազորդութիւն ստացան թարգմանչաց Կամակերթարանի երկուու աշակերտութիւնը Յետ Ս. Պատարազի կատարուեցաւ ուխտաւորաց յատուկ թափօր, հաւատացեալները հանդիսաւոկան արարողութեամբ այցելեցին Ս. Յարութեան Տաճարի բոլոր Ցնօրինական վայրերը: որոնց իւրաքանչիւրին մասին արուեցան բացատրութիւնները, Ազա վարդապետ հայրեր վերադարձան պաշտօնական թափօրով մայրավանք:

26 Ապրիլ, Աւագ Հինգամբի: — Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ յետ առաւոտեան ժամերգութեան, կատարուեցաւ Հապաշխառողաց կարգը, որուն յաջորդեց օրուան մեծահանդէս Ս. Պատարազը: Պատարազին էր Գեր. Տ. Զարեհն Ս. Եպս. Փայտալեան, մէծ թիւուկ հաւատացեալները ընդունեցին Ս. Հազորդութիւնը:

Յետ միջօրէի ժամը 2.30ին Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ տեղի ունեցաւ Սունութայի արարողութիւնը՝ նախագահութեամբ Գեր. Տ. Մամրէ Ս. Արքեպոս. Ոիրունեանի Ներկայ էր ոչ միայն ժողովուրդի հոգ բազմութիւնը, այլև շաբաթ մը օտարազգի բարձրաստիհան կրատիբալները, ինչպէս նաև քաղաքիս Վասմ կապավարիչը: Արքարողութիւնները կատարուեցան Սըրոց թարգմանչաց վարժարանի աշակերտութիւններու և շրջանաւարտ սանութիններու կողմէ, զեկովարութեամբ Հոգ. Տ. Յարութիւն Վ.րդ. Մուշեանի: Խել Տաճարը զարդարուած էր օրուան խօրհուրդին համապատասխան լրջութեամբ և զեղեցկութեամբ: Տաճարի մեծվայելու խօրանը ողողուած էր ամրողութեամբ ներմակով ու հարիւրաւոր կանթեզներու ցութերովը: Բնմին մրայրազմած էին 12 վարդապետներ՝ աջ ու ձախ կողմէն Գեր. Տ. Մամրէ Ս. Արքեպոսիկոպոսին, որ հագած էր մայրավանքի գանձատան չքեղագոյն զգեստներէն մին: Ուժիքրու լուացումէն յետոյ, անզիներէն լեզուուկ աւետարան կարգաց նաև Անկիլիքան եղիսկուոսուուր:

Երեկոյեան ժամը 6ին Աննա քահանայապետին տան տեղուցյն վրայ կատարուցուած մեր Ս. Հընկարակապետաց վանդին մէջ, կատարուեցաւ յատուկ թափօր, ի Ներկայութեամբ ժողովուրդի խօսւան բազմութեամբ մը. թափօրը կարգով այցելեց Քրիստոսի Ս. Բանտը, Զարչարանց խօսանչիւրին առջև եղան աւետարանէն ընթիւիասի Միաբան Հոգ. Տ. Բարզէն Վ.րդ. Վարդապետներն կողմէ: Երեկոյեան ժամը 7ին Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ սկսաւ լացի զեշերուան արարողութիւնը, որ տեսեց մինչև կէս զիշեր: Արքարողութեան ընթացքին Գեր. Տ. Մամրէ Ս. Արքեպոս. Ոիրունեան շատ կուռ քարոզով մը

հաւատացեալներուն մեկնեց չարչարանաց դիշերին փրկարար նշանակութիւնը:

27 Ապրիլ, Աւագ Աւրար. — Առաւօտուն Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ թաղման կարգը, դարձեալ, նախագահութեամբ Գեր. Տ. Մամրէ Ս. Արքեպո. Սիրունեանի Դասմին մէջ կազմուած էր իրեկ Քրիստոսի Մ. Գերեզմանին նշանակ յարցարուածք մը մէր մակարութիւն ժաղիկներով, ժաղիկներով և լոյսերով ողջունուն^(*): Թաղման այս ուստառուչ արարուութեան ներկայ էր հաւատացեալներուն հոծ բազմութիւն մը որ կ'ողջէր մինչեւ ներկեցոյ վերնատան բարձունքը:

28 Ապրիլ, Աւագ Զարար. — Առաւօտեան ժամը 8 ին Ս. Աթոռոյու աւագ թարգման Հոգ. Տ. Առողի Վրդ. Դաշտարեան, Ընկերակցութեամբ Հոգեցնորհ հարց և բարեցնորհ սարկաւագաց և Ս. Յարութեան Տաճարի իսլամ զոնապաններուն, պաշտօնական թափորով իջաւ Ս. Յարութեան Տաճար, կատարելու համար Տաճարի դրան հանդիպաւոր բացումը^(**), որմէ եւսք Հայ. Ցոյն, Ղոփի և Ասորի ուխտաւորներ և տեղացի համայնքը, որնը կը սպասէին Ս. Յարութեան զրանքանիւններու, կարգաւ մոտան Տաճարէն ներս, իւրաքանչիւրը տեղաւորուելով իրենց յատուեք բաժնէն ներս: Կէսորէ առաջ ժամը 10.30ին նախազառութեամբ Գեր. Տ. Մամրէ Ս. Արքեպո. Սիրունեանի, հոգեցնորհ վարդապետ Հայրեր Հայ Ակառուտներու առաջնորդութեամբ՝ շքերթով իջան Ս. Յարութեան Տաճար, ու անզամ մը ըշրջելէ ետք Ս. Գերեզմանի բոլորի քարտիքը՝ Գեր. Սըրբազն առաջնորդութեան մեջ տեսչաւորութեանցաւ մեր տեսչարանը ուր ընդունեց մեզի հետեւակ Ղոփի և Ասորի եկեղեցականներու նորհաւորական այցը, ապա բարձրացաւ հայկական վերնատան Ս. Գերեզմանին հանդիպակաց պատշգամը: Ժամը 11ին կատարեւեցաւ Ս. Գերեզմանին դրան հանդիպաւոր կընթառում, Հայոց և Յաւնաց հոգեցնորհ թարգմաններուն կողմէ ի ներկայութեան վահեմ կառավարիչին (սոյն կը բումը նշանակն է Քրիստոսի Գերեզմանին կնքման Քահանայապետներէն): Այդ պահուն մարած կ'ըլլան Տա-

(*) Ս. Երուսաղէմի մէջ երեք բնդունելի չէ եղած Աւագ Աւրարթու թաղման կարգի ընթացքին «Քրիստոսի զազահ» զարդարելու և նեկեղեցւոյ մէջ թափորով շրջեցնելու Ցունական այն ծեր՝ որ արտասահմանի մեր կարգ մը եկեղեցիներուն մէջ կ'իրացրծուի: հետեւելով Ցունական աւելորդապաշտութեան:

(**) Ս. Յարութեան Տաճարի դրան բացումը՝ իւրաւունը է միայն Հայ. Ցոյն եւ Լատին Պատրիարքութեանց, ասոնցմէ իւրաքանչիւրը երեք օրը անզամ մը առտուն կը բանան ու երեկոները կը փակին Տաճարին դուռը, իսկ Զատկի մը արագաւույցի օրը դրան հանդիսաւոր բացումը կը պատկանի միայն Հայ Պատրիարքութեան:

ճարին բոլոր կանթեղներն ու մոմերը, բացի այն մէկէն որ կը գտնուի Ս. Գերեզմանէն ներս և ուրեկէ պիտի լուցեն նուրիբական լոյսը: Ժամը 12 ին թափօրի եւաւ Յունաց միաբանութիւնը, Ս. Գերեզմանին շուրջ երբակի զարձմամբ, որմէ յետոյ մեր լուսահանը՝ Հոգ. Տ. Սուրբէն Վրդ. Քէմհաճեան և Յունաց հանդիպակետը զիտստաւորեալ մտան Փրկչին Ս. Գերեզմանը, ու հոն կատարելէ յետոյ լուսաւորեայի յատուկ աղօթքները, անոնք վառեցին Ս. Գերեզմանի զոյդ պատուհաններէն (մին Հայկական միւսը Յունական) զուրս տրուեցան հոն սպասող աշխարհական լուսակիրներու կոզմէ անմիջապէս տարուելու համար, առաջինը՝ մեր եպիսկոպոսուն երկրորդը և երրորդը լուցելու համար Հայազդի հաւատացեալոց մօմերը իսկ շորորդը և իւրեղին լուցելու համար մեզի կատեւակ Ղապտի և Ասորի համայնքներու մօմերը: Արարողութիւնը այդ պահուն կը հասնի իր խանզդի զագաթնակետին, երբ մէկ կոզմէ Գեր. Նախագահ Սըրբազանը իր բարձրազիր պատշգամէն, Նուրիբական լոյսով կ'օրնէ հաւատացեալները, որոնք իրենց կարգին օրնութեան և զեղումի կանչերով կը լեցնէին Տաճարը, մինչ միւս կոզմէ լոյսը ըշջան կ'ընէր Տաճարի բոլոր անկիւններու, հաւատացեալէ հաւատացեալ լուցելով կ'արդի վարդապետ մօմերը, իսկ Տաճարի բոլոր զանգերներուն: — Հայ և Ցոյն լուսահաններու Ս. Գերեզմանին զուրս զալէն յետոյ կազմուեցաւ մեր լուսաւորեայի թափօրը, նախագահութեամբ լուսահան Հոգ. Տ. Սուրբէն Վրդ. Քէմհաճեանի թափօրը երիցս ըշրջելէ յետոյ Ս. Գերեզմանին շուրջ, խմբուեցաւ Ս. Գերեզմանին առջեւ, ուր կարգացուելէ յետոյ Յարութեան լւեւտարանը, թափօրը բարձրացաւ մեր վերնատունը: Այս հանդիսէն յետոյ հոգեցնորհ վարդապետ Հայրերէն և ուսանողներէն մաս մը մնացին Ս. Յարութեամն՝ հոն կատարելու համար ձրագալոյցի Ս. Պատարագը: Միաբանութեան մնացեալ մասը, Գեր. Տ. Մամրէ Սըրբազնի զիխաւորութեամբ և Բարեսիրաց, Հ. Ե. Մ. և Հ. Մ. Ռ. և Հ. Մ. միւս թիւններու սկառուտներուն առաջնորդութեամբ վերապարձան մայրավանք, թափօրական գնացքով, Ս. Քաղաքի փողոցները թնդացնելով Յարութեան աւետիսութիւն և շարականներէն եւ բարեկաններու երգեցողութեամբ: Ժողովուրդի հոծ բազմութիւն մը կը հետեւէր ոչ միայն թափօրին այլեւ կը լեցնէր փողոցներուն երկու կողմերը, մինչեւ պատշգամներն ու պատուհանները: Թափօրը հասնելէ յետոյ մայրավանք մտաւ, Ս. Յակոբեանց Մայր Տաճարը, ուր կարգացուելէ յետոյ Յարութեան լւեւտարանը փակուեցաւ սոյն հանդիսութիւնը Գեր. Նախագահ Հարիւրաւոր արձաթ կանթեղները կը պլուլան

Քիչ յետոյ մայրավանքի մեծ զանգը անզամ մը եւս կը հրաւիրէր բովանդակ ուխտաւորութիւնը ու սաղիմահայութիւնը մասնակցելու ձրագալոյցի մեծ խորհուրդին: Մայր Տաճարի Հարիւրաւոր արձաթ կանթեղները կը պլուլան

գունաւոր շողերով, ու Աւագ Խորանը փակուածէ հնազարեան ու թանկարժէք, երկնագոյն, Ա. Զատկի վարագոյրով, որուն վրայ հրաշալի ասեղնազորթութեամբ բանուած կան բրիստոսի բոլոր Տնօրինութիւնները. զիմանկարները առաջեալներուն ու մարգարէներուն: Սրտառուչ զնացքով ընթացք կառնէ ձրագալոյցի արարողութիւնը, որուն անձկագին կը հետեւի Մայր Տաճարը լեցնող բազմութիւնը, ու Յարութեան աւետիսին հետ հանդարտորէն կը բացուի Աւագ Խորանի մեծ վարագոյրը: Ի յայտ բերելով Ա. Խորանը իր ամենաշքել վառքին մէջ, մինչ միւս կողմէ Մայր Տաճարի պատուհաններէն ներս ինկող արեւմարի վերջին ցոլքերը կը բոցավանեն մեծ խորանը իր ոսկիի, արծաթի, մետաքսի ու հարիւրաւոր հրագիներու հանդերձումին մէջէն: Խորագէ տպաւորիչ այս պահուն Մայր Տաճարի կամարները կը թնդան կոմիտասեան բազմաձայն պատարագի քաղցրահնչիւն երգովը, որուն կը խառնուին հաւատացեալներու սրտարուխ օրհներգներուն թաւ աղմուկը: Ա. Պատարագը մատոյց Հոգ. Տ. Բարդէն Վրդ. Ապատեան: Ա. Հաղորդութիւն ստացան բազմաթիւ հաւատացեալներ, որմէ յետոյ կատարուեցաւ Ա. Զատկի տօնին նախատօնակը, նախագահութեամբ Գեր. Տ. Մամբէ Ա. Հօր: Ապա Միարանութիւն և ուսանողութիւն թափոր կազմած շարականներու երգեցողութեամբ բարձրացան վանքի սեղանատունը, ուր յետ սեղանորհնէքի՝ կատարուեցաւ Ա. Զատկի վանական ճաշը:

29 Ապրիլ, Ա. Զատկի. — Կէս զիշերին, ժամկոչի երգախառն հրաւելը, ճօկանի զարկերն ու մայրավանքի մեծ զանցը արգէն իսկ ոտքի է հանած բոլոնզակ ու խստաւորութիւնն ու սաղիմանայ հաւատացեալները իրենց նինջի թմրութենէն, որոնք խուռներամ կը սպասեն վանքի աւազ զրան շրջափակին, հետեւելու համար հանդիսաւոր թափորին: Ու քիչ յետոյ նախագահութեամբ Գեր. Տ. Զարեհ նզու. Փայալեանի, կը կազմուի պաշտօնական թափորը Միարանութեան ու խուռներամ բազմութեան, որոնք սկսուաներու թիւնը ուրումով բարպառաններու արձաթեայ ասաներու գոփիւններու ընդմէջէն, վառեալ լապտերներով կը յառաջանան դէօփի: Ա. Յարութեան Տաճար, Միարանութիւնը կատարելէ յետոյ Գողգոթայի իր ուխտը, բարձրացան հայկական վերնատան մատուքը, ուր կատարուեցաւ գիշերային ժամերգութեան կարգը մինչեւ ըլցաք, ապա բովանդակ Միարանութիւնը և աշակերտութիւնը սպիտակափայլ զգեստաւորումով խաչ ու խաչվառներով, նախագահութեամբ Գեր. Տ. Զարեհ Միարանի, որ իր կարգին զգեստաւորուած էր Ա. Յակոբի գանձատան նօի զգեստաներով, իջան Ա. Գերեզմանի շրջափակը: Հօն կատարուեցաւ առաւօտեան ժամերգութեան մնացեալ մասը թափորական զնացքով: Ա. Գերեզմանին զրան կարգը լի հանգիստ, թափորը անկէ զերջ մուտք գործեց Մայր Տաճարը, ուր կատարուեցաւ երկոյեան ժամերգութիւն:

30 Ապրիլ Բ.Հ. Բ. օր Զատկի. — Յետ առաւօտեան ժամերգութեան Ա. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ մեծ ահանդէս փառաւորութեամբ պատարագեց և քարոզեց Գեր. Տ. Զարեհ Ա. Լու. Փայալեան, Ա. Պատարագի երգեցողութիւնները կատարուեցան մասնակցութեամբ Ընծայարանի, Ժառ, վարժարանի սաներուն և սաղիմանայ երիտասարդութեան, զեկավարութեամբ Հոգ. Տ.

ընդմէջէն: Թափորը կատարելով պատանատեղույն և ապա զարձեալ Ա. Գերեզմանի զրան կարգերը, աւարտեցաւ մեր վերնատան մատուալին մէջ, կէս ժամուան դազարէ մը յետոյ սրուն ընթացքին կը հնչէն մեր ձաշու կոչնակները, Տաճարէն ներս իր երկորդ մուտքը զործեց Միարանութիւնը, նախագահութեամբ Գեր. Տ. Մամբէ Ա. Արքեպիսկոպոսի, զարձեալ սկսուաներու և բարապաններու առաջնորդութեամբ, ապա Քրիստոսի Ա. Գերեզմանին վրայ հանդիսաւորապէս պատարագեց և քարոզեց Գեր. Տ. Մամբէ Ա. Արքեպիսկոպոս Հէկտաս: այլ յարեաւ ընարանով, ներկայացնելով Քրիստոսի Յառաւթեան նշանակութիւնը բովանդակ Քրիստոնէութիւններութեան ու մանաւանդ Հայ ժողովութիւններին համար: Ա. Պատարագի ընթացքին երկիւղած չերթեամբ Ա. Հաղորդութիւններու ստացան ժողովութիւններու մէջ մարդ ընդունուած մը: Յետ Ա. Պատարագի Միարանութիւններու ժողովութիւններու մայրավագարան մայրավագինոյն հանդիսաւոր թեամբ ու կարգով ինչպէս երկէ, ու չարականներու երգեցողութեամբ բարձրացան պատրիարքարանն ու Գեր. Նախագահ Արքանի օրհնութեամբ գար փակուեցաւ հանդէսը: Երեկոյեան, նախագահութեամբ Գեր. Տ. Մամբէ Արքեպիս. Սիրունեանի, կազմուեցաւ Ա. Զատկի երեկոյեան թափորը, որ սկսելով Մայր Տաճարի կամարէն հոգեւոր երգերով խաչ ու խաչվաններով ու վառեալ մոմեղէններով յառաջացաւ զէպի ընդարձակ գաւիթը մայրավագին որուն բոլոր տարածութիւններուն մինչեւ պատուանականներուն ու տանիքները խոնուած էր հաւատացեալներու հոծ բազմութիւնն մը: Երեկոյեան մայրամուտի շողերուն հետ կը շողշողային թափորականներու ձանրագին զգեստաւորումները, ամենէն շքեղներն մեր գանձատան, հերմակ ու ժիրանի, ուկիթել նկարէն բանուածաւած քանի նկարէն աննկարագրելի զեղեցկութիւնն մըն էր Գեր. Նախագահ Արքանի սպիտակափայլ ու սկսելով մինչեւ պատուանականներուն շուրջանը, որուն վրայ ագուցուած էին բազմաթիւ արձաթեալ ու սկսի նկարէն կոճակները: Թափորը կանգ առաւ մեծ գաւիթին կեղծրոնը ուր կարգացուեցաւ օրուան աւետարանի ընթերցուածները, ու կատարուեցաւ Ա. Զատկի մէծահանգէս անդաստանը: Ապա թափորը շարականներու երգեցողութեամբ կատարելէ յետոյ շրջանը մեծ անդաստանին Մայրավանքի կամարակապ բաւիղներէն յառաջացան դէպի Մայր Տաճարի գաւիթը, ուր կատարուեցաւ Հոգենանդիստ Հայ Աղջի բոլոր հին և նոր ննջեցեալներուն ի հանգիստ, թափորը անկէ զերջ մուտք գործեց Մայր Տաճարը, ուր կատարուեցաւ երկոյեան ժամերգութիւն:

Ցարութիւն վրդ. Մուշեանի, որ ինչպէս Աւազ Հինգաբթիի, ձերակելոյցի և Ս. Զատկի օրերուն այսօր ևս յաջողութեամբ իրագործեց կոմիտասեան Պատարացի բազմամայն երգեցողութիւնը, թեո Ս. Պատարացի կատարուեցաւ օրուան մեծահանգստ թափօրը, նախագահութեամբ դիբ. Տ. Մամբրէ Ս. Արք. Սիրունեանի, որ զգեստաւորուած երջանկայիշատակ Յովհաննէս Կոլոս պատրիարքի թանկարժէք զգեստներով, Քրիստոսի խաչափայտի մասունք ի ձեռին կ'օրիննէր տաճարի խոռոշներամ բազմութիւնը, թափօրն կը մասնակցէին Գեր. Տեղապահ Հայրը և Գեր. Տ. Զարեն Ս. Եպուղ. զգեստաւորեալ, խաչ զաւազան ի ձեռին, իսկ հոգեշնորհ վարդապետ հայրեր՝ ծիրանի ու սոկեթել բանուած շուրջառներոյ և ի ձեռին ունենալով՝ սուրբերու մասունքներ, Նոզեսր երգով ու Մայր Տաճարի զանգակներու զօղանջն հետ թափօրը երեք անդամներ շրջան ընելէ յետոյ Մայր Տաճարին մէջ, կանց առաւ մեծ ատեանին մէջ, որ յատկապէս հաւատացեալ ու խոտաւորներու համար երգուեցաւ չը անապարհը ապա կարդացուեցաւ վ'ասն հիւանդաց ազօթք, ու արարողութիւնը փակուեցաւ Գեր. Նախագահ Հօր պահպանիչով:

Ազա Միհարանութիւնն և ուխտաւորութիւնն թափօրով բարձրացան պատրիարքարան, ուր Գեր. Տ. Մամբրէ Սրբազնն օրհնուած նշանակներ բաժնեց բռորին:

— Այս երեկոյ յետ երկարատեւ հիւանդութեան իր յաւիտնական հանգիստը մտու Ս. Աթոռիս տարեկ անդամներէն Հոգ. Տ. Ներսէս Վրդ. Թօրոսեան, հոգեշնորհ հօր մարմինը քանանայաթաղի կարգով վիտապրուեցաւ Մայր Տաճար:

Պ. Ա. Շ Տ Օ Կ Ո Ւ Ա Խ Ա Կ Ո Ւ Վ

* 10 Ապրիլ Դշ. — Հանգիստ Բաղէկ Փաշան նաշաշիպիի Օկոստա վիզթօրիա հիւանդուցին մէջ, առաւօսեան ժամը 10ին Գեր. Տեղապահ Հայրը՝ ընկերակցութեամբ Հոգ. Տ. Առողիկ Վրդ. Դաշարեանի և Տիար Է. Հինգիւանի ներկայ եղաւ յուղարկաւորութեան արարողութեան: Թաղմանական թափօրը ընթացք առաւ Եկյի ձարանէն (Կաչաշիպիներու վողոց) մինչեւ 0մարի մզկիթը, ուր կատարուեցաւ յուղարկաւորութիւնը, որմէ ետք մարմինը ամփոփուեցաւ Եկյի ձարանի իր զերդաստանին յատուկ զերեղմանատան մէջ:

* 11 Ապրիլ Դշ. — Յորդանանի Պաշտպանութեան Նախարարութեան կողմէ Բանակի Օրուան տօնին առիթով, մասնաւոր հրաւերի մը վրայ, Գեր. Տեղապահ Հայրը՝ ընկերակցութեամբ Հոգ. Տ. Առողիկ և Յակոբ վարդապետաց, առաւօսեան ժամը 10ին Ամման մենացեցաւ ու ներկայ եղաւ Արք Լիճնի զինուորական տողանցքին Ազա ժամը 12.30ին, մասնակցեցաւ ի պատիւ Թագաւորին տրուած հաշկերոյթին:

* 19 Ապրիլ Եշ. — Յորդանանի Վեհ. Թաղաւորի բարեխնամ կարգաղրութեամբ Ս. Տեղեաց բարձր վերահսկող և Հարամ էլ - Եկրիֆի պահապան կարգուեցաւ Վահեմ. Տօքթ. Հուսէյն Ֆախրի Պէլ էլ խալուի, հանգուցեալ Ռաղէկ Փաշա Նաշշիպիի իրբե յաջորդ:

Վահեմ. Մութասարիփի մասնաւոր հրաւերին վրայ՝ Պատրիարքարանիս կողմէ այս առիթւ կազմակերպուած հաւաքոյթին ներկայ զտնուեցաւ Գեր. Տեղապահ Հայրը ընկերակցութեամբ Հոգ. Տ. Ասողիկ Վրդ. Դաշարեանի և Տիար Կարպիս Հինդեանի ներկայ էլին ամբողջ կառարակն կազմը և հոգեռոք վաներկայացուցիչներ, Բնգունելութիւնը տեղի ունեցան Ռատուայի օրանին մէջ:

* 20 Ապրիլ Ուր. — Ի զիմաց Գեր. Տեղապահ Հօր, Հոգ. Տ. Սուրեն Վրդ. Քէմհանեան ընկերակցութեամբ Տիար Կարպիս Հինդեանի ներկայ զտնուեցաւ թէյասեղանի մը տրուած ի պատիւ Տօքթ. և Տիկին C. H. Kraelsingh American School of Oriental Researchի տնօրէնութեան կողմէ:

* 21 Ապրիլ Ծր. — Յետ միջօրէի ժամը օին Եղիպատարայց Առաջնորդ՝ Գեր. Տ. Մամբրէ Ս. Արքեպոս. Սրբունեան ժամանեց Ս. Աթոռ, Նախագահներու Աւագ Շարիֆուայ և Զատկուայ արարութեանց:

* 22 Ապրիլ Ուր. — Կէսօրէ առաջ, Յերիոյ թեմի Առաջնորդ՝ Գեր. Տ. Զարեն Սպա. Փայտական ժամանեց Ս. Աթոռ:

* 27 Ապրիլ Ուր. — Երեկոյեան ժամը 7ին ի պատիւ H. M. Waddamsի (Church of England, Council on Foreign Relations) ընթրիքի սեղան մը տրուեցաւ մեր պատրիարքարանի վաքր զանին մէջ, իրեն կ'ընկերանային տեղւոյս Անկիքան Եպիփակոպոսարանի երեցներէն երկու հոգի և մէկ աշխարհական ներկայացուցիչ: Բնթրիքին ներկայ էլին նաև Գեր. Տեղապահ Հայրը, Գեր. Տ. Մամբրէ Ս. Արքեպոս. Սրբունեան, Գեր. Տ. Զարեն Ս. Աթոռ. Փայտական և ժողովական հայրեր: Բնթրիքին վերը հիւրերը առաջնորդուեցան Ս. Յակոբեանը Տաճար տեսնելու կարգ մը արձեք բաւոր եկեղեցական զգեստներ և սպասներ:

* 30 Ապրիլ Բշ. — Ս. Զատկուայ տօնին առիթւ ընորաւորութեանց եկան, — Երուսաղէմի վահեմ. Մութասարիփը, Ամերիկան Ընդհանուր Հիւոպատոսը, Երուսաղէմի Վահեմ. Քաղաքակետը, քաղաքապետարանի կազմով, որոնք ընդունուեցան Գեր. Տեղապահ Հօր և Գերապատիւ Մրբազններէ:

Ս. Զ. Ա. Տ Կ Ի Ո Ւ Ե Տ Ա Խ Ո Ր Ո Ւ Ի Թ Ի Կ Ն Ե Բ

Այս տարի գրքախտաբար մեր ուխտաւորութիւններու թիւը քաղաքական կացութեան բերումով մեծ չեղաւ: Ունեցան մօտաւորապէս 120 ուխտաւորներ, մեծ մասամբ Պոլսէն, Եղիպտոսէն, Լիբանանէն և Սուրբիայէն: Եկած էին նաև Ամմանէն: Անոնք հոգեշնորհ վարդապետ հայրերու առաջնորդութեամբ այցելեցին բռլոր Մրբավայրերը, ուր իրենց համար եղան մասնաւոր ընդունելութիւնն և արարողութիւններ:

ՅՈՎԱԵՓԵԱՆ ՏԱՐՐԱԼՈՒԾԱՐԱՆ

Ի ՊԱՏԻՒ ԵՒ ՅԱՆՈՒՆ Ն. Ս. Օ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

Ա.Գ. ԲՈՒԺԱՐԱՆ, ԱԶՈՒՆԻՑՔ - ԼԻԲԱՆԱՆ

Սիրելի Հայրենակիցներ,

Հիւծախսի ամուզուն հիւանդուրեան դեմ պայքարելու եւ վարակուած մեր տարաբաղդ առենակիցներուն լաւագոյն կերպով օգտակար հանդիսանալու մաղրուրեամբ, Խնամակալ Վաշչուրինը ոչ մեկ ջանք կը խնայէ Բուժարանը դուճնելու Լիբանանի առողջապահական արդիական հաստատութիւններէն մին:

Բուժարանի ընդլայնումը կը պահանջէ ամբողջացումը եւ արդիականացումը անոր բժշկական սարքաւորման: Ի նպաս այս նպատակի իրազուցման, Բուժարանը մօսեր պիտի տիրամայ Ամերիկայն համբայ հանուած Ք. հառազայրի երկու մեթնաներու որոնցմէ մին խոռոր եւ ամենակատարեալ գործիք մըն է, իսկ միւսը Ք. հառազայրի շարժական մեթնայ մը, նույրուած՝ Օր. Լիլա Գարակօգեանի կողմէ:

Մակայն գմբախսաբար ցարդ կարելի չէ եղած օժտել Բուժարանը մանրէաբանական եւ քիմիական լիան սարրալուծարանով մը՝ որուն զոյուրինը խիս անհրաժեշտ է նման հաստատուրեան մը համար: Ահա այս առաջադրուրեամբ, Խնամակալուրինս որուած է զոյացնել հիմնա բառ մը տարրալուծարանի մը սարքաւորման համար եւ զայն կոչել «Յովկէփեան Տարրալուծարան»՝ ի պատիւ եւ խոնուն մեր Վեհափառ Հայրապետին՝ Տ. Տ. Գարեգին Ա. Կարողիկոսի Տանն Կիլիկիոյ:

Վերշերս Խնամակալուրինս ընորհակալուրեամբ սացաւ Կիպրահայ մեր պատուական ազգայիններէն՝ Skr եւ Տիկին Տիգրան Աւզունեանէն, 100 Անզլ. Ռոկիի սրաբուխ նույր մը՝ ի զանամատուրին Խնամակալ Վաշչուրեան մեծայազ Անենապես՝ Տօֆր. Յ. Ա. Եկեղիումեանի մատուցած անձնուեր եւ բանկազին ծառայուրեանց՝ ննորհազարդ Հայրապետին Տ. Տ. Գարեգին Ա. Կարողիկոսի երկարաւել հիւանդուրեան ընթացքին:

Տօֆր. Եկեղիումեանի ցանկուրեան համաձայն, Խնամակալուրինս Skr եւ Տիկին Աւզունեանի 100 Անզլ. Ռոկիի նույրատուրեամբ կը բանայ ՅՈՎ. Ա. ՖԵԱՆՆ ՏԱՐՐԱԼ. ԱՒ-ԾԱՐԱՆՆԻ Ֆոնտի հանգանակուրինը եւ կոչ կ'ընէ սփիւռքի մեր սիրելի Հայ ժողովուրդին ուպեսի այս անզամ եւս բերեն իրենց աւատանեռն մասնակցուրինը լազողուրեամբ պահելու, համազային այս ձեռնաւրկը՝ յօցուն մեր տառապոյ հիւանդներուն եւ ի պատիւ մեր Հայ ժողովուրդի ժինարար և սեղծազոր ողիին:

Հանեցէ զրկել Ձեր նույրեներ Ազգ. Բուժարանի Խնամակալ Վաշչուրեան Գամձապահներուն՝ սուրբ տուած հասցեներով. —

Miss. Leila Karaghouzian, 295 Fifth Avenue New-York 16 N. Y.

Mr. Levon Nazarian, P. O. B. 707, Beirut (Lebanon)

Կանխայայս ընորհակալուրեամբ եւ Հայրական օրհնուրեամբ ու սիրոյ ողջունիւ,

Ի դիմաց Հայ Ազգային Բուժարանի Խնամակալուրեան

Փոխ-Նախագահն

Նախագահն

Վեր. Ե. Յ. ՀԱՏԻՑԵԱՆ

ԽԱԴ ԱՐՔԵՂԱ. ԱԶԱՊԱՀԵԱՆ

Նախագահ Հայ Աւես. Գերազոյն ժողովի Կարող. Փոխանորդ Լիբանանի Թեմին

Յ. Գ. — Կը խնդրուի արտասահմանի բոլոր Հայ քերերէն արտասպել:

ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒԹԻՒՆ «ՍԻՌՆ»Ի

Ամերիկային Մեծ Տիար Մ. Գայըզնեան բարեկրօն ազգայինը Վասն բարգաւաճման «Սիոն»ի կր նուիրէ 25 Ամերիկան Տոլար: Մեր շերմագին ընորհակալութիւնները Յարգելի նուիրատուին:

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ «ՍԻՌՆ»Ի

«ՍԻՌՆ»Ի ԽՄԲԱԴՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԿԻՒՂԵՆԿԵԱՆ ՄՈՏԵՆԱԴԱՐԱՆԸ
ՃՆՈՐԾԱԿՈԼՈՒԹԵԱՄԲ ԱՏՈ.ԱԾ ԵՆ ՀԵՏԵՒԵԱԼ
ՀՐՈՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԵՐԸ

Հարցապնդում — ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԱՅԻ ԱՆՑՈՒԴԱՄ ԶԵՐ՝ 1927 - 1950, հեղինակ՝ Լութիկիկ Գույցումնեան, Խսթանպուլ, 1950, էջ 160: Նուէր հեղինակէն:

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՒ ՎԱՐԴԱՆ ՄՈՄԻԿՈՆԵԱՆ, Հեղինակ՝ Գրիգոր Ա. Սարաֆեան (Բ. Տպագրութիւն) Ֆրէզնօ, Գալիքորնիա. 1951, էջ 62: 2 օրինակ: Նուէր հեղինակէն:

ԱՐԺԱԿՈՒՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱԶԱՐԱՄԵԱՅ ՓԱՌՔԸ, հեղինակ՝ Բ. Թաշնեան (Քարենց), Գահիրէ, 1950, էջ 557: Նուէր հեղինակէն:

ՎԱՀԱՆ ԹԿԹԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ ԼԵԽՈՆ ԶԱԼԻՆ ՍԻՒՐՄԷԼԵԱՆԻՆ ԵՒ ԼՈՅԱ ԶՈՒԱՐԸ, (հեղինակ՝ Լ. Զ. Սիւրմէլիան), Նիւ Եորք, 1950, էջ 117, (2 օրինակ): Նուէր «Նոր Գիր»ի Խմբագրութենէն:

ՊԱՏՐՈՒԹԻՒՆԻ ԱՐԵՒՄՑԱՀԱՅ ԱՐԴԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ, հեղինակ՝ Կ. Սասունի, Պէյրութ, 1951, էջ 373: Նուէր հեղինակէն:

ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆԵՐԸ, հեղինակ՝ Արշակ Ալպօյանեան, Գահիրէ, 1950, էջ 479: Նուէր «Հայ Ազգային Հիմնադրամ»ի Վարիչ Մարմնի կողմէ:

ԱՐԱՄԵԱՆԻ ԵՒ ԿԵԴՐՈՆԱԿԱՆԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԸ (Տակաւին թարմ յիշատակներ) հեղինակ՝ Արտաւազդ Արքապիսկոպոս, Մարտէլ, 1950, էջ 201: Նուէր հեղինակէն:

ՀԵՐՈՎԴԻԾ, հեղինակ՝ Անուշան Ֆրանկիւլեան, Պէյրութ, 1951, էջ 59: Նուէր հեղինակէն:

ՀՈՅԱ ՏԵՍԱՆ

ԱԱՐԵԿ ԱԴՅՈԹԱՄԱՏԵԱՆ ԳՐԵԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑԻՈՅ

Արդի Հայերէնի վերածեց՝ Թորգոմ Արքեպիսկոպոս Գուշակեան:

Գ. Տպագրութիւն, 1950: Գի՞ն՝ 350 Ֆիլս կամ 7 Եփին:

ԳԱՆՉԱՐԱՆ ԱԴՅՈԹԻՑ

էջ 167: Գի՞ն՝ 100 Ֆիլս: